




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ ԼՈՐԵՆՑ

ՈՐԵՐԻ
ԽԱՄԲԻՆ

1.2

891.99

7-93

1926

6 NOV 2011

891.99

G-93

Պաշտօններ բոլոր յերկրների, միացե՛ք !

ՎԱՂԱՐՇԱԿ ԿՈՐԵՆՑ

ՈՐԵՐԻ ԺԱՄԲԻՆ

ՅԵՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ I ՀԱՏՈՐ

Դ Ի Լ Ի Զ Ա Ն

1925

12 JUL 2013

76604

Տպված է Դիլիջանի Գավգործկոմի
Տեղեկատվության բաժնի՝ տպարանում:

Գրառեպիտ № 8255

Պատկերի № 174

Տիրաժ 1000 օրինակ

Դիլիջան 1925 թ.

Գրառար լեզվապահի՝ Հակոբ Սարգսյան

Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Գ

Առաջին անգամն էմ հնարավորություն ունենում առանձին գրքով հրատարակելու բանաստեղծություններս:

Ժողովածուն խմբագրելիս աշխատել էմ այնպիսի նյութեր տեղավորել գրքում, վերոնք ընդհանուր առմամբ բնորոշում են իմ անցած ուղին, առանց հնարավորություն ունենալու հրատարակել այն բոլոր գրվածքները, վոր սերտ կապված են ու լրացնում են մեկ-մեկու: Գրվածքներին մի մասի գաղափարական կողմի հետ ալժամ յես ել համաձայն չեմ, բայց իմ անցած ուղին մասամբ բնորոշելու համար նրանց հրատարակությունը անհրաժեշտ համարեցի:

Ի սրտե շնորհակալություն էմ հայտնում այն բոլոր հիմնարկներին և ընկերներին, առանձնապես Դիլիջանի Գավգործկոմի Նախագահությունը, վոր բարոյապես և նյութապես ոժանդակեցին այս գրքի լույս տեսնելուն:

Վ. Ն.

17 սեպտեմբերի 1925 թ.

Դիլիջան



24381-59

ՃԵՐՄԱԿ ՏԵՍԻԼՆԵՐ

1921-1922

ՃԵՐՄԱԿ ՏԵՍԻԼՆԵՐ

Շարքը՝ Հովհաննես Թումանյանի

I. ՊՈՆԵՏԸ

Դաշտի վրա մարմար մեհյան
հազար ճամբու սկիզբ ու վերջ.
հանգույցների հանգույց ե նա՛
գաղտնիքներով դյուլթիչ ու պերճ:

Մեհյանի մեջ նստած ե նա՛
յեւ պատանի, յեւ ծերունի, —
ակոսված ե ճակատն իր լայն,
բայց աչքերը հուրեր ունեն,

Մինչ հազարներ կերթան-կգան
մարմարաշեն մեծ դռներից,
կփրփրի հսկա Շուկան,
կդատարկվի, լեցվի նորից, —

Ոթկանում դեռ նստած նա
անհուն մի գիրք լուռ կթերթե.
կերթան-կգան, իսկ նա մենակ
նրանց մեծ վեպը կկերտե:

2. ԽԱՐԽԱՓՈՒՄ

Այն գիշերն այնպես բարդ էր,
այն գիշերն այնպես էր մութ,
վոր ահի ակնթարթը
թվում էր մի դար անդուծ:

Այն ուղին այնպես ձիգ էր,
անորոշ էր, անհատնում.
մաքառման վերջին ճիգը
ճամբին զուր էինք վատնում:

Ո՛ր էինք գնում, ո՛ր էր
կայանն այն աստեղաբիբ,
ուր, իբր, վառվում էր հուրը
ու՛ վոչ վոքին չէր խափի...

Այն ուղին ցնորք, մութ էր,
մահն էր նրան գուրգուրում.
մեզ թովում էր հին սուտը,
մենք՝ շրջիկ, ճերմակ ուրու:

3. ՎՈՐԲԸ

Քնած է նա անգոր, անկամ,
ու աղացիան սիպ-սաղափե
աշիկների վրա մանկան
թեղթիկներն իր լուռ կթափե:

Գութ-թերթերի ճերմակ հպումն
մանկան հոգում, — յեթեր անող, —
շողացնում է, կամար կապում
ծիածանի գույները յոթ:

Ի՞նչ է տեսնում մանուկը հեզ
մեն մի թերթի մեկ հպումից.
— այն յերջանիկ վայրկյանն է մեկ,
անկրկնելի հանդիպումի...

Յերբ դարձեցրին՝ անգուստ լացավ,
հարցրին՝ ասավ խեղճն անամոք.
— «Ինչպե՞ս պատմեմ տյն, վոր անցավ,
վոր չտեսավ ձեզնից վոչ վոք»:

4. ԼՈՒՍՆԻ ՄԱՅԸ

Մի իրիկուն՝ գորշ ու մթին՝
բանաստեղծ մի խորհրդասեր
ծուլված միստիկ հին հեքյաթին՝
լուսնի ծագմանը կսպասեր:

Բացվեց դուռը անճուրնչուն,
լույսի հոսանք մի ներս հասավ,
ու մի մանուկ քաղցրահնչուն, —
այդ հոսանքի միջից, — ասում՝

— «Մի յերազն լուսինն անհույս,
մենք թաղեցինք յերեկ նրան՝
սառած եյին իր փայլն ու լույս...
բայց նորանոր արևներ կան»:

.....

Յերբ վեր աչքի նա յեկած եր՝
դատարկ եր սիրտն սառի հույզից,
— «Ահ, լուսնին եմ արև կարծել
ու սառել եմ նրա լույսից ...»:

5. ՊԱՌԱՎԸ

Նույնն եր յերկուսիս ուղին,
արահետ՝ շուրջն ապառաժ.
ինձ հետ յելել եր գյուղից
հարյուրամյա մի պառավ:

Ապրած որերը նրա
դարձել էին լուռ կընճիռ.
աչքերն իր՝ մարվող ճրագ՝
ունեցին մի սառ վճիռ ...

Հարցրի նրան. — «Դեպ հւր,
հուր ենք զնուժ մենք հիմա,
հողմի գեմ՝ յերկու փեռուր» —
— «Վորդիս, ասավ, դեպի մահ ...»

Ուղեցի խեղդել նրան,
սակայն նա ինքը պաղավ ...
թաղեցի ճաժերի վրա,
խելագար յես յետ փախա:

6. ԴԵՊԻ ՏՈՒՆ

Որերի սարսափը հուր՝
չողացող դաշույն մի շեկ՝
դանակեց իմ սիրտը նուրբ,
արյունով առաջ քշեց:

Սարսափած տեսա մեկեն
գալիբը հորձանք, հորձանք,
բայց հոգին իմ դեռ հեգ եր,
իմ հոգին հին գառանցանք:

Նոր կյանքի խինդն ել, հինչն ել,
վոր թմրած հոգիս անսաց,
կարծեց, թե մահվան ճիչ ե՝
սոսկումի թեվին նստած:

Ու մզլած գանկա, գիտե՞ք,
թե ինչեր, ինչեր ծնավ.
— հնար չե՞ փախչել միթե
ու կրկին յետ, տուն գնալ ...

7. ՄԱՅՐՍ

Պլխիս վերն ամեն գիշեր
անձայն թռչուն մի կթառի.
ուսկից կգա նա, չեմ հիշե,
տխուր ընկերն իմ սնարի:

Ճերմակ ե նա, փրփուր- փետուր,
կարծես լույսի ալիք ե ջինջ,
վոր քշել ե մութը մրուր
մենանոցիս ծոցը անսինջ:

Կթառի նա տխուր ու լուռ.
գութ-աչքերով ինձ կնայի.
զուր կսպասեմ նրանից լուր
ու նայվածքս վար կսահի ...

Յերբ կցանկամ տեսնել կրկին՝
ել չկա նա, վոչ ել իր չուն,
ու թռել ե դեպի յերկինք
իմ մտերիմ, ճերմակ թռչուն:

8. ՀԱՅՐՍ

Կիսախարխուլ մի խուց ե հին,
ծոցում կանթեղ մի դալկաբոց.
մի ծերուկ իր միտտիկ հոգին
ծխում ե լուռ, անհեծկլաոց:

Գլխին կյանքի ձյունն ե իջել
ու կախվել ե մորուքից վար.
տաճար դեմքին՝ յերկու աչեր—
հույսահավատի ջահեր են վառ:

Ձեն շարժվում շուրթերն իր չոր,
խոր հոգու մեջ կաղսթե ինք
և իր սիրտը թախծատուչոր
աղոթքի տեղ կենե յերկինք:

Կնվաղի լույսն կանթեղի,
իր աչքերն ել նրա նման.
ինքն ել՝ դարձած մի լույս դեղին՝
լուռ և ձուլվեն, կանեանան...

9. ՔՈՒՅՐՍ

Մի դեմք ունի՝ ասես՝ լուսին,
շուրջը յերկու ամպ-խոպոպիկ.
վարսերի հետ սափորն ուսին,
ջրի կերթա վոտաբորիկ:

Ժպիտ ունի աչքերի տակ,
ինչպես մի լույս՝ ամպի խորեն,
ինքն ել այնքան նուրբ ե, հստակ,
վոր կկարգաս իր մեջ իրեն:

Աղբյուրի մոտ կանդնած՝ անհարց
նա կնայե ջրին այն ջինջ,
նախ կժպտա, ապա հանկարծ
խառնե նրան ծիծաղ ու ճիչ . . .

Ու կհալվեն ծիծաղ ու ջուր,
հրաշք՝ ինքն ել ձուլվեց, թափով
դարձավ ճերմակ, ճերմակ փրփուր . . .
ափին մնաց դատարկ սափոր:

10. ՅԵՂԲԱՅՐԱ

Նա ասպետ է, ճերմակ հագած,
 գանգուրները իջած ուսին,
 սուրն իր՝ շանթի մի շերտ կանգնած,
 ինքն ել կարծես սիրան ելույսի:

Ճերմակ մի ձի ունի իր տակ,
 լսյալ մի գունդ՝ հողմ արշավով
 կասպանդակե նա համարձակ,
 ինչպես արևն իր յերկնքով:

Ծիծաղ լույսեր ցանկելով շուրջ
 դեպ ինձ կգա շտապ-շտապ,
 բայց հեռու յե, վորպես անուրջ
 տիեզերքի ծոցում անուպ:

Սորիսորատ մի կա մեր միջև.
 Բ, այն անցնելն անհնար է.
 խորտակվեցավ . . . կերթա մինչև,
 ուր վոր հոգիս կնշմարե:

24381-59

11. ՎԵՐՋԸ

Այն ուղ եր ճիշտ լսեց
 ու յեկավ կրակ հոգով.
 արևն եր, գանկս լիզեց,
 չորացավ ճահիճը դու:

Շեկ լույսի յերկու բյուրեղ
 արևն իր հուր կնճիթով
 իմ սրտի վերքին դրեց,
 ու հոգիս բացվեց խինդով:

Մշուշը հազարփեշեն
 լուռ ծալեց թևերն իր հին...
 և հազար քաղաք ու շեն
 ժպտացին փախչող նիւրհին:

Ու ծաղկած սրտիս վրա
 ախորժով անուշ-մեղուշ
 հյուսում եր մեղրը իրա
 հրաթե մի նոր մեղու:



12. ԱՐԵՎԻ ՏԱԿ

Իմ բարի աչքերով, ընկեր,
հաճախ չար, արնակալած՝
տեսել եմ յես մարդը մարդակեր
ու կյանքը մահահալած:

Սարսափից բարացել եմ յես,
խեղդվել ե ճիչն իմ կոկորդուս.
տեսել ես մանուկն արածել ե
ու կերել ե մայրը վորդուն...:

Ընկել եմ դաժան գեհեն,
յերբ զուրս եմ յելել չերված,
թողած արևն վրսկեղեն
տեսել եմ ուրուներ ճերմակ.

Մինչև մշուշը արյան
ցնդել ե խարող արևով.
ներիր մեղքն իմ հնորյա,
ընկեր իմ, որ արևոտ:

ԿԱՅԾՈՌԻԿՆԵՐ

1.

Ընթերցող,
հերձվածող լինես հնին,
հերձող,
կամքիդ մտրակով
հների հաստ սաղրին քերծող,
Կամ

Յեղուկ, հեղհեղուկ, անդեմ,
(քեզ մի պաշտամունք կա հին)
վոր հինը սրտումդ բանդել՝
շողսքորթում ես ներկային,
Կամ

Խուղճապող անդարձ,
վոր ինքդ քեզ ես գոտեպնդում «կացիր»,
ու նահանջիդ եշը
որերի հորձանքի դեմ
բարձրացնում ե աքացի, —
Լսիր:

Ընթերցող,
հերձող լինես հնին,
նորին մերձող լինես
կամ նահանջող քերծվող,
Լսիր:

Ամբան գիշերները կամ աշնան,
բայց անպայման գիշերը,—
յերբ մութը վիշապ
լույսի նշույլները քշել է,
յերբ ամեն տեղ պղպած է
ահի ճիւղաղը.
յերբ մարդու աչքերը
լույս են հայցում
— «Չկա».

ու գիշերվա վախը
հենց մարդու բերքից է
լույսերը, կայծում.
յերբ ուրուն իսկ տարուբեր
վախկոտ սրտի պատերը
յեղունգներով է քերում,—
փայլում են մոտիկ հեռվից
թփերում կամ մարգերում,
ճգնավորի ճրագի պես,
դեղին լուսիկներ.
ահառիկ մանուկը կխենթանա խինդից...

Յեթե սիրտդ անհույս է՝
«այդ դեղին լուսիկն ել,
կասես, բավ է ինձ».
կցնծաս դու ել:

Իսկ յերբ լուսանա
ամսից կշիկնես,
վեր անգամ . . . կայծոռիկը
հուսաբեկ սրտիդ լույս է տվել:

Մութի մեջ
լույս է վորդը կայծոռիկ.
շուշանե հույսն է
ահամեռ հանգած որի:
Հիշիր որերդ անարև,
գիշերած որերդ մռայլ,
մեր խարխափումն անտրի
այն հին ճամբերի վրա.
հիշիր լուսիկները դեղին՝
մեր նայվածքները թովող,
վորպես վրկաթյան հրաշք.
այն, գիտես, վորդեր եյին՝
գիշերվա մութը վրդովող.
Իսկ լույսին՝ այլանդակ, պժգանք:
հրաշքի . . . վորդեր:

Բեր.

ահա մի լուսատիտիկ,
կայծոռիկ մի վորդ,
Մալիկ.

— այս ինչ է,
թե հարցնես փախչող քերծվողին,
ո՞ւ ամսի, կասե՛
«Այս է փնտրածս»:

Թե հարցնես նորին մերձողին՝
նախ կզարմանա,
հետո կհարցնես քո ընտրածը,
քո կարծիքին է նա:
Իսկ յեթե հարցնես հերձողին,

Կասե՛՛ «Վոչինչ ե, մի վորդ,
այն մուծի մեջ եր,
վոր լույս եր վորդը կայծոռիկ.
շուշանե հույսն եր
լուռ, հանգած որի:

4.

Ե՛յ մուծի մեջ յերեկվա
փայլփլոց կայծոռիկներ,
հըր չքացաք,
յերբ բացվեց պայծառ աչքը ցերեկվա.
Ել չկա գեղին փայլն իսկ
յերկշուտ մանկանց հուսադրող,
որերի աչքը պայծառ
(թարթիչներով արևի
ճառագայթները սանրող)
արդեն տեսնում ե ձեզ պարզ:
Ել չունեք փայլն իսկ գեղին
հեռվից հաղիվ առկայծող,
ու փայլի տեղ անցողիկ
մնացել ե լուկ փոշին,
վորպես շպար անտեղի:
Ել հիմա մարդ չեք գտնի մթամիտ,
վոր աչքում
փչեք փոշին ձեր գեղին,
Եյ մուծի մեջ յերեկվա
փայլփլոց կայծոռիկներ:

«ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ»

1922

«ԻՆՔՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ»

Հարյավ հոգին իմ վորք,
հավես հարյավ
ցնծուն ու խենթ, վորպես
մեղահավ:

Վ. ՏԵՐՅԱՆ

1.

Յես ձեռած եմ.
դուք կաք գուցե
ու հիշում եք Վաղոն,
այն մանուկը ծեղ,
վոր իր հոգին գոցեց
ձեր սրտի դագաղում:
Հիշում եք, լսում,
վոր նա
կանգնած գրսում,
կոռնա.—
հիշում եք՝ գիշերվա ցրտին
դուռ չբացիք
նրա համար,
բայց զգացիք լուսաբացին,
վոր ձեր սրտում
մեխված է մի ժանգոտ դամա...
Հա, Վաղոն եր այն,

Վոր իր հողին եր թաղում
ձեր սրտի ունայն
դադաղում:

2.

Ու Վաղոյի սիրտը հիվանդ
մնաց փողոցում թողնա՝
հեռավոր արեվին ավանդ.
շները սոված, քոսոտ
փախցրին նրան ժանիքե ժանիք
ու մի որ արին
փողոցի վրա
շնահարսանիք:
Միայն արյան
մի կաթիլ
կաթեց մայթի վրա.
(այդ կաթին իսկ կյանք ուներ,
ու յերբ վոր դար ժամանակը նոր,
ձեզ համար կրակ ու նեռ,
չգիտեյիք, վոր կարող ե նա
նորից նոր ծաղկել, մնալ):
Չկարծեք մենակ Վաղոն եր
փողոցում անոր ընկած.
ո, այնքան, այնքան Վաղոններ
կային անարյուն, սմբած
ու վերջին կաթիլը արյան
ցողած մայթերի վրա:

3.

Ու այն արյունը յերկնել ե նորից.

յերկունքից ծնվել նորեր ու նորենց.
և ահա

Աշխարհաքաղաքի
«Որիանտ» փողոցի վրա, —
ուր հողմերը գալիքի,
վորպես անսանձ կրակ,
հրդեհում են սրտեր,
ձգում զրգիռ ու տապ, —
կանգնել են ամենքը մեկանց,
վորպես հսկա մի բառբաբ՝
դարերի ճամբի վրա.
Իսկ Վաղոն կանաչ
մի ընձյուղն ե նրա:
Յեվ ահա, տեսեք,
արևի ներքո
ծանրաբեռնված ե նա
կարմրաշեկ մրգով:
Հազար սիրտ ունի նա՝
հասուն, հալվող մրգեր,
ու արևը անխնա
հուզում-կիզում ե դեռ,
հասունացնում նորից.
ու ծորում ե, հոսում,
վորպես կարմիր նուռից,
այն սրտերից հասուն
աշխուժի ժիր զինին
ու թրթիռով լցնում
մեծ խնջույքի սինին:

4.

Աշխարհաքաղաքի

«Որիանտ» պողոտայում
կանգնել ե նա, կյանքի
հեռուներն ե նայում,
ու այնքան զգած յե նա,
ու այնքան հսկած յե նա,
վոր չեք կարող կարծել
թե՛ այն սրտերն են հիվանդ,
նոր կյանքի յեն դարձել
ու տալիս են նորից
կյանքին պայծառ ավանդ
հազար նաեր, նորենց:



ՈՐԵՐԻ ՍԵՐԸ

1923

1. ՍԵՐԸ

Իմ սիրտը բրնձե մի թաս.
Թափել եմ արյունն իմ հին՝
գիտելի աշտը կգաս,
կլեցնես քո նոր գինին:

Լեցրել են որերն հրհուր
իմ սրտում կարմիր ծիծաղ.
ծիծաղում շողշող մի սուր՝
քո սերը գաժան մի խաղ:

Վառվումն սրիդ շեղբին
արյունա ցում ե ալ.
քո սուրը ել պինդ սեղմի,
վոր սիրտս տապով հետ,

Վոր զգամ խոր ու անմոռ
քո սերը, յերբեք հեղած,
սրերի իմաստը նոր՝
գալիքի զոհասեղան:

2. ՅԵՍ

Վերաժողորմ կորյունն եմ յես.
ներկայի հրե լեզուն
գազազած, հզոր մոր պես,
իմ սրտի վերքն ե լեզուն:

Լիզում ե սիրտս, բուժի,
արյուն ու զարկ տա նրան.
հին վերքս դառնա փռի,
տեղը նոր վառվի կրակ...

Իմ մայրը՝ մի եզ առյուծ՝
արյունաչ կանգնել մենակ,
աչքերը հեռվին հառում,
մոնչում, փնչում ե նա.

Ահեղ փնչոցից նրա
որերն են իրար մորթում.
աչքերիցն իր բորբ կրակ
զալիքն ե բոսոր հորդում:

3. ԿԻՆԸ

Դու լսիր որերի յերգին,
թող սերդ պահ մի լռե.
հեռվում փռվել ե մի տիկին
ու շուրջը փառք ե փռել:

Ահա բացել ե ծծերն իր,
ծծից լույս-կաթ ե հոսում.
վարդերն են ծաղկել իր բերնի,
բերնից վարդերն են խոսում:

Խոսքերն իր կանչեր են հրե,
վոր լուսված իր սիպ-կաթով,
որերի թռիչքն են գերել
ու սրել անգուսպ խանդով...

Ո՛, տիկին, ո՞ կապույտ տիկին,
լույս-կաթով արյուն-յերզով,
եղ կանչի, զիլ կանչի կրկին
իմ սիրտն ել փայլդ յերզով:

4, ԼՈՒՅՍԸ

Որերի զենիթի վրա,
վորպես մի ծիծ լուսակաթ,
կախել ե կապույտն հրակ
լուսալի, մի բոբբ սակառ:

Յեւ մարդիկ շուրթերով կրքոտ
կախվել են ծծից լուսե.
՛, նրանք հրավառ կրքով
խմում են վայելք ու սեր:

Ու հետո հարբում են անհագ,
փրփրում հուր նախանձով,
սրում են ժանիք ու դանակ
փռելու բոբբ աբյան ծով...

Սակառի ծերպերից բարակ
ցնծուղվում, լույս ե հոսում...
՛, արև, թող սիրտս ծարավ
լոգանա միայն լուսում:

5. ՎՍՅԵԼՔ

Տիրանի

Աշխարհի բախտի վրա,
վորպես վեթխարի մի դո՛ւ,
արևն ե կախվել շռայլ
ու լույս ե ծորում անդուլ:

Ծորում ե ժպիտ ու սեր,
սրում ե գրգիռ-շարժում,
վառում համայքներ լուսե
ու կյանքը առաջ քաշում:

Բացել են սիրտ ու սինի
մարդիկ արևի դիմաց,
խմում են լուսե գինի,
արբում են կյանքով հիմա:

Ու՛մ ինչ փուլթ թե յես ու դու
չենք խմել մի ումպ անգամ.
Ղջում ենք շվար, անտուն,
մեռնում ենք լուռ, արնաքամ:

6. ԱՅՍՈՐ

Այսոր արբել են ամենքը,
սուղվել որերի միգում.
այսոր կյանքը, մահը, մեզը
փնտրում են մեկը մեկու:

Յերկուս են, մեկը հասուն է,
դեղնել է, պետք է վառվի.
խակ մեկը հուր է, կիզում է,
վոր կյանքը առաջ տարվի:

Անսանձ այս խինդը, այս ահը
թովել են յերգ ու յերազ.
մեկ սիրտը կյանք, մեկը մահ է,
լափում են այդպես իրար:

Վաղը կանցնեն ես որերը,
յերը նրանց հուրն աղոտի,
մեզ կայրե պայքարի սերը,
կվառվի հուր կտրոտի:

7. ՌԱՆԳԸ

ՅԼ. Չառեցիկ

Հավերժի ճամբի վրա,
անվախճան արևի տակ,
ժամանակն անկանգ, արագ
փռում է գորգը իրա:

Ու գորգը անծալ, անծայր,
վորպես ուղին շարժումի,
ռանգերով հազար ու մի
ժպտում է հոգուս պայծառ:

Թող հոգիդ ինձպես բերկրի,
յեղբայր իմ, յերգ ու կրակ,
դարերի ճամբի վրա
քան ռանգը մեր որերի

Ել չկա գույն ու յերանգ,
վոր այնպես հոգուդ գերե
ու կյանքի սրտին բերե
արևի բոսոր բերկրանք:

8. ՅԵՐԳԸ

Որերի արնոտ սրտում,
վորպես գնդակ հրթեժ,
սուլում ե գիլ, խլրտուն
մի յերգ շող-շող, հրթեժ.

Ողակ-ողակ հրալիք
ձգված հնից հեռու՝
սուրում ե դեպի գալիք,
ամեն ինչ հարթում, քերում.

Ճեղքում ե հզորականչ
կյանքի սիրտը չնշող,
նրանից, վորպես ականջ,
կախում հրե մի ող:

Կատաղած որերն հրթիռ
թողել ե նա վազք, չափ.
որերի իմաստն ե հիլ
զրգիլ, շարժում, խուճապ:

9. ԶՈՂԸ

Որերի գոհի սեղանին
գրել ե ջլուտ մի բազուկ
իր գոհը վոսկե գլխանի,
աչքերում սարսափ ու ցասում:

Իր գոհը՝ մի ցուլ վոսկեղջյուր՝
գազազել մահվան տագնապից,
տեսել ե դանակն հրահուր,
նայում ե շվար, ակնապիշ:

Տեսնում են աչքերն մութ ու չաբ
ապրելու յերազն իր հետին.
բառաչն ե թռչում խելագար,
սարսում ե յերկինք ու գետին:

Իսկ ինքը, գոհողն հաղթական
վառել ե խարույկ խնդումի,
նայում ե դեպի Աղագան,
վոր սիրով նա գոհն ընդունի:

10. ՎԱՀԱՆ

Արևի հուր հրի դիմաց
բարձրացել է դեղին մի թաթ.
կույր աչքեր ել դեռ կան հիմա,
կարծում են թե արևն է դա:

Նրա լույսը պաղ ու դեղին
բավական է պղերգ մարդուն,
վոր մոռացել լույսի ուղին,
մրափում է կիսաարթուն:

Իսկ ում սիրտը յերգ է հիմա
ու տենչում է արև և հուր,
նա տեսնում է թաթի դիմաց
բարձրացել է շող-շող մի սուր:

Գիտե՛ այսուր հսկա մի դարկ
պիտի ճեղքե թաթն այդ դեղին,
վոր մոխրանա վահանն այդ չար,
բացվի արև-հրի ուղին:

11. ԲԱՆԱԼԻՆ

Դեղին սրտերին դող-դող
մահն է միայն կարելի.
ով նոր է, վեհ, անհողողող,
աչք է հառել արևին:

Յեղբայրներ, ով վոր իզուր
շմեղ է ուրերի վաղբից
ու կապ է ընկել լեզուն,
չի զգում ուժն իր բազկի:

Կամ ով վոր դեղին փայլով
խաբված է մինչև հիմա,
իբր սրտի ծանր սայլով
որորվում է դեպի մահ:

Կամ ով վոր անել, անդուռ
ընկել է արյան բաղանիք,—
հնար կա, ճշացեք ամուր.
— «ՀՈՎՏԵՍՐԵՐ, ԲԵՐ ԲԱՆԱԼԻՆ»:

12. ՓՈՇԻՆ

Որերի ճամբի վրա
մարտի յեն հիմա խուժել
վիթխարի յերկու ուժեր՝
մեկ դեղին ու մեկ կրակ:

Անվախճան դեղին մի շուք
տեսել են որերը դեռ,
վոր մնա, յերբ շեկ հրդեհն
իր կարմիր փառքն է քշում:

Դարերի ճամբի վրա
հենց հիմա, այս իսկ ժամին
որերի մրրիկ-քամին
փռում է հրդեհ, կրակ....

Պիտ ալիւ, անդարձ քշե
թափով շաչուն – շառաչուն
հենց վաղը որերի չուն
դեղնության անգույն փռլին:

13. ԽՈՒՍԱՓՈՒՄՆ

Արեւ՝ հրեղեն մի շերտ՝
ճեղքել է, կիսել որը.
մեկը ցերեկ, մեկը գիշեր,
վորն ես ուզում, վորը:

Որերի ցոլքը հրափայլ,
արևի դաշույնի պես,
ճեղքել է կյանքը, յեղբայր,
բաժանել է յերկու կես:

Իսկ դու պահում ես սիրտը քու
որերի սրից հրեղեն,
վոր մնա ենպես անգույն,
ինչպես յերեկ է յեղի:

Բաց սիրտդ, թող կիսվի հրից,
թե չե անխուսափ շանթը՝
մեկն՝ կոյաթի նորից,
սիրտդ հիմից կքանդե:

14. ԱՐՇԱՎ

Նոր մարդիկ վառ, անհամբեր,
հողմի պես, վռազ-վռազ
որերի մեջքը թամբել,
թռչում են, նստում վրա:

Գալարը ե, վազը ե անդուլ,
քշում են, քշում, քշում.
յետեվը վռնում ե ծույլ
անցյալը՝ անտեր մի շուն:

Որերի վաշտերը խիտ
թռչում են թափով անսանձ
ու նրանց բաց յերախից
փրփուրը թափվում ե թաց:

Վռազի այդ գալարքում
որտեքը պայթում են գումբ
ու իրենց կարոտն անքուն
նետում որերից հեռու:

15. ՀՈՐԴՈՐ

Հորով են շրջում խառնակ
որերը անիվ-անիվ.
սվ կուզե յետև դառնալ,
վոր հնից մի հուշ հանի:

Ո՛, ի՞նչ հուշ, մշուշ ե, մահ.
վայ քեզ, թե հետ ես դարձել,
որերդ դաշտ են ամա,
կյանքդ՝ ծանրանիվ մի սել:

Յերբեք, յերբեք մի դառնա,
ինչ ել վոր թողած լինես,
մենակ ես, սիրտդ խառնակ,
չգիտես թե ի՞նչ անես:

Որերը տես սավառնակ,
ուժ տուր թուլացած բազկիդ
թող տիրող կորով բառնա,
կախվիր որերի վազքից:

16. «ՀԵՍՈՒ»

ԸՅԿ. Ս. Հ-ԻԳ

Լսիր նրա լեզուն,
 վերջին որը յերբ գա,
 յերբ նոր, հզոր Հեսուն
 — «Արև, կանչի թե՛ կայ»

Թող լույս լինի ու փայլ,
 կանչը լույսում խաղա.
 փայլ ու փողով, յեղբայր,
 մանենք վերջին քաղաք.

Փշրենք դարպաս ու դուռ,
 քանդենք վերջին պարիսպ,
 կապենք իրար ամուր
 Մոսկով — Լոնդոն — Փարիզ...»

Լսիր նրա լեզուն,
 վերջին որը կգա
 ու նոր, հզոր Հեսուն,
 — «Արև, պիտ կանչի, կայ»

Արդեն մեծ մայրը մեր՝

հավերժապետ ջահել

կյանքը՝

հատել է

ժամանակի կառքը

շողշողուն-բրբռում:

Յեղբայր Իվանը,

յես-Գիբոն,

Հասանն

ու Շալիկոն

հատել ենք նրա գրկում:

Կառապան Կամքը

հազած կրակ շրեր՝

դարձել է հմայք:

ժպտում է աշխուժորեն.

ամուր, աներկյուղ

բռնել է սանձը յերկճյուղ

յերկու կողմերի:

Ձիյերը՝ յերկու նժույգ՝

վոզի հողմերի,

վրնջում են առույգ:

Միտքը՝ արևի պես մի լապտեր՝

գամեղ ենք կառքի գնչին,

վոր միշտ լույսը լինի անթեր

ու ձիյերը հանգիստ թռչեն:

Ահա կամքը խառնազանեց,

ահա կառքը սուրաց,

ահա տոփյուռնը վեր

աստղի հունտեր ցանեց,
ահա լապտերդ մեր՝
մի անսպառ քուրա՝
մշուշները վանեց:

Կառքը ձեգ թռչում է,
ձիւները տոփում են,
արտերը
մեզ հետ ծփում են.
Կյանք է առել հողը.
հովն ու հողը ծափում են.
մենք ճչում ենք,
մենք ծափում ենք անհող.
յեղբայր Իվանն

առած փողը
փչում է լիաթոք,
փչում է գիլ,
անասելի սուր,
ուզում է ասել՝
— Մենք զնադիրք արգեն
կարմիր, անդարձ յերթով.
ճամբան այժմ հարթ է
դուք ել յեկեք հերթով:
Ու մեր կառքը հանդիսավոր,
ճամբաներին արգեն սովոր,
կծկում է յերկար ուղին ...
մեկ էլ
մայրիկն անմահ
ճչում է ուրախ՝
«ահա,
զավակներս, ուխտատեղին ...»

Յույց է տալիս նա մեզ
մի դյուխական պարտեզ,
դռան վրա գրած
արեային գրեր.
դա մի բառ է հրե,
ու բոլորս մեկեն
մեր աչքերը սրած
ուզում ենք այն հեգել.
մեր մեծ մայրը ջահել
ինչպե՞ս խինդը պահեր.
կարդում է նա՝
«Կոմսուհա» . . .
կրկնում ենք ամենքս,
վոր անմոռ մնա՝
«Կոմսուհա,
կոմսուհա,
կոմսուհա»:

Վար ենք իջնում կառքից
ու մանում ենք Այգին,
բաժանվում ենք ձեզնից,
տուք ել վաղը՝ այգին,
յերբ վոր զարթնեք ու գաք,
կտեսնեք մեր Այգին
ու մեր ներկան կզգաք:

ՈՐԵՐԻ ՃԱՄԲԻՆ

1923

ՈՐԵՐԻ ՀԱՄԲԻՆ

1.

Գալիս եմ հեռու հեռվից,
շաղկած կարոտ ու բաղձանք,
վորպես մի շրջիկ բեղվին՝
բյուրաբյուր ճամբիք անցած:

Տանում եմ ուրուն մահի
վաղվա մուգեյին նվեր,
սարսափը լուռ ամայի
շեներին անկյանք, ավեր:

Մի գիշեր մահը կարող
լիկում էր շեն ու քաղաք.
յես լույս ու կյանքի կարոտ՝
թողեցի տունս, փախա:

Թողեցի մահի մահճում
սրտեր հարազատ ու մոտ,
գուր եյին նրանք ճշում—
աղերսում գութ ու ամոթ:

Հրդեհը հազար լեզու
կատաղած կրքերին գերի՝
լիզում էր, անհագ լիզում
մարմինը հաղթ. շենքերի:

Ու մինչև յերկնի հեռուն,—
վառված տատղերի ջահով,—
սարսուռի թույն էր փսում
յերկիրը՝ գարշ, ճենճահոտ:

Փռում եր թույն ու թարախ
հրեշը բյուր գլխանի.
կյանքը դառնում եր. ավանդ,
դժոխքի գեշ բազանիք:

Սրտից թռած ճշի պես,
թռած հանկարծ, անգիտակ,
մենակ փախչում եյի յես
աստղալույս յերկնքի տակ:

Անշարժում լուսադեմին
վերջին շնչողն եր մեռնում.
հայրենի տանս շեմին
մեր միակ շունն եր վառնում:

Այլես յես չդարձա,
վոր հուզեմ նիրհը փռում.
ու հանգավ անգույն, անձայն
են կյանքը գորշ մշուշում:

2.

Շալակած կարոտ—բաղձանք,
փորպես մի թափառ բեզմին,
բյուրաբյուր ճամբեր անցա՝
աչք հառած գալիք հեռվին:

Կայան առ կայան անցա
սարսափի դաժան ուղին,
ամեն կայանում անձայն
մի դառն արցունք թողի:

Ամեն մի լույս կայանից
գողացա հույսի մի շող,
արևի լուսեղ մի գիծ՝
գալիքի մասին հուշող:

Հասա գալիքի ափին
փռոտ-խոնջած, արնագին,
սիրտս ուզում եր արբի
այդ բախտով քաղցր ու անդին:

Բայց դառն ու դաժան ուղին
քամել եր արյուն ու միս,
ու զում եր հանձնի հողին
տանջանքն իմ ես անգամի...

Որերի ճամբի վրա,
փորպես մի դառն լքում,
ընկել եմ մեղք ու կրակ,
անգոր արյուն եմ թքում:

Հեռվում փռված է սուրբաբուր
գալիքի գորգը գարուն.
որերը հուր-հրահուր
զրգիռ ու տենչ են վառում:

Ընկել են չափ ու արշավ
ուժերը նոր ու ջահել,
գալիքին ով վոր հառավ,—
նրան է բախտը պահել:

Ուզում եմ յես ել վազել,
համբուրել գալիքն ագնիւմ:
Ով ե իմ հափ յերազել,
վոր գալիք կյանքին հասնի:

Որերը շրջիկ-շրջիկ
ուզում են ինձ ել տանել:
որերի մի հուր ազդիկ
բռնել ե ձեռքս՝ «գե՛ր յե՛ր»:

3.

Արեւածագ ե, կարծես,
կապույտ ծովերի վրա, —
վառվում են, վառվում են կեզ
աչքերը քումայթ-քուրս:

Շուրթերն իր կրակ են կաս,
տենդեր ծնող յերկու բոց,
շուրթերում ճերմակ յերազ՝
տենդերում ձգվող հոգոց:

Շարժվում են շուրթերն ագահ,
վորպես հրդեհի լեզու, —
«Քո սերը քեզ հետ կգա,
նստել ես գուր և իզուր»:

Զգում եմ՝ հուրը հասավ —
խուժում ե սրտիցս ներս,
աբեն ե հրահոսան՝
սրում ե զրգիւ ու սեր:

Իր կրծքի գաշտի վրա
խփել ե շուշան-շուշան
ճեփ-ճերմակ յերկու վրան
գարունը արեւաշատ:

Ու վորպես կարմիր զրոշ
վրանի գլխին դարկել,
յերկու կայծ բորբոք հրով
կայծկլտում են անարգել:

Ու յերկու վրաններում,
վորպես բանակներ զգաստ,
սերն ու հույզերն են յեռում,
վոր գալիք գրոհն զգամ:

Ու վաղը հուր կհորդեն
սիրո բանակներն ու թափ
կխուժեն, լեցվեն արդեն
Աշխարհը նոր մայրության:

Կլինի յերգ, հաղթանակ,
կյանքը կվանե լույսեր,
կցնձան բանակ-բանակ
մանկություն, մայրություն ու սեր:

Ու վտաքի կենեմ թեթե
այդ սիրով քաղցր ու անգին,
հանձնվեմ հուր-հրաթե
որերի նոր հորձանքին:

Վորպես շրջիկը ֆաբրը
հասած կայանում ընկնի,
բեզրած ճամբի գրկանքից,—
հենց մայթի վրա քնի.

Անցվորներն վտաքով զարկեն,
կամ զարթեցնեն բարեմիա,
նա զարթնի,— ուզի սարքել
խնդության մի նոր առիթ

Ու նստի հեշտ, անխոկում
խմե գինի ու արագ,
ճամբա ընկնի, պանդոկում
մոռացած ցուպ ու մախաղ.

Ու ճամբին միայն հիշե
մոռացված բեռի ժառին,—
այգպես են այսօր քշել,
ինձ հանձնել նոր յերազի:

Ու նորից յիկել ետպես,
բռնել եմ կյանքի ուղին.
Հուշերս հանձնել եմ՝ յես
մնացող մառախուղին:

Ամեն կայանում բերել
թողել եմ մի դառն արցունք,
վերջին կայանից առել
նոր կորով ու հիացմունք:

Հիմա որերի ճամբին
չի մնա վոչ մի լքված,
որերը բռնում են պինդ,
սրբում են կսկիծ ու լաց:

Աղջիկն այս հուր-հրագին
որերի մի մասն է լոկ,
վոր հոգիս ցնցեց ուժգին,
վորպես մի ելեկտրատոկ:

Հրահրեց կրկին, կրկին
նոր ծարավ ու նոր կարոտ,
վոր հեռվում մահն ընկրկի
ու վառվի նոր առավոտ:

Ու վորպես թափառ ֆաբրը՝
շալակած տենչ ու յերագ,
յես ու իմ սերն արնագին
ահա նոր ճամբի վրա...

Ու թռված հեռու հեռվից
գնում եմ ուզիս յերկար,
վորպես մի խիզախ բեզվին,
վոր ուխտ է դնում Մեկկա:

Թե ծանր ուղին նորից
առթե մի նոր հոգնություն,
ճամբի կեսին զլսելիմ
ուժասողառ, անողնություն,

Թե նորից մնամ անսեր
դաշտերում սառն-ամայի,
ինձ ցանկան տանել մուղեյ,
վորպես ստվերը մահի.

Թե նորից մաղձ ու վահրով
լերդացած արյուն թշեմ,—
կհասնի նոր հույս վառող,
վոր արն վառի իմ դեմ:

Կվառվեմ նոր ծարավով,
կյանքը քաղցր կթվա,
սրտով կսրհնեմ նրան, ով
մի վարկյան ինձ ձեռ տվավ:

Ով վոր մահը չի տեսել
դաշտերում մենակ—ամա,
ում սիրար վոր չի կիսել
տանջանքի ժանգոտ դաման,—

Նա աշնքան վառ-վարդադույն
չի տեսնում կյանքի հեռուն,
մահի վարկյանին՝ թաքուն,
անկարոտ, լուռ և մեռնում:

Իսկ յես, վոր սրն ի բուն
կրում եմ տանջանք, բաղձանք,
ո, աշնպես խորն եմ արբում
մի լույս-վարկյանով անցավ:

Տեսնում եմ դալիք հեռուն,
կյանք-արշավը դեպի նա,
տենչա՝ կյանքի պես յեռուն՝
քշում ե, հրում՝ «Գնա»:

Ու նորից կենեմ, անքուն
կըկծկեմ ուղին յերկար,
մինչև վոր մի իրիկուն
հաղթական մտնեմ «Մեկկա»:

ՀՈՒՑԱԵՐԻ ՀԵՅԱԵՐ

1925

ՀՈՒՅՁԵՐԻ ՀԵՅՁԵՐ

ՍԵՒԻԿԻՆ

ՆԱԽԵՐԳ

1.

Գլխապառույտից դարձ եր
ա՛յն վազքի ճամբի վրա.
զգացի ցավ մի, կարծր
սրի պես, սրտիս խրած...
Յերբ ու շքի յեկա՝ ուշ եր,
փոխվել եր ամենն հանկարծ,
շուրջս կախված մշուշ եր,
որերը՝ չված անդարձ:
Թվում եր՝ ինձ կապել են
անշարժ, մի սյունի հենած,
որերը շտապել են,
ինձ թողել ճամբին մենակ:
Թվում եր թե կախել են
իմ գլխի վերև մի դույլ,
վոր ծորա ծույլ, մխալեն
իմ վրա դառն մի թույն:
Կարծես անլույս մի աչք եր
իմ վրա հեռվից թարթում.
Նայվածքը այդ պաղ աչքի
սրտիս հույսերն եր կարթում:

Քվում եր՝ յես, հույսերս
քնկել ենք թակարդ մի չար,
զուր եր գութ աղերսելը,
զուր եր բաղդի դեմ ճշար...

2.

Քայց կտան դարերը գեթ
մի վարկյանի որինակ,
յերբ կյանքը նյութին լքե՛
անշարժ մի ձև հորինած:
Քարն իսկ կմնա կպած
յեննակողին ապառաժ,
անկանգ հոլովման դիմաց՝
հավերժից հավերժ հառած:
Շէ՛ սուր եր մտքիս սուրը,
իմ սրտի բաբախը առք,
որերի թուփը սուր եր
և կնոջ սերը կրակ, —
վոր անշարժ, չեղածի պես,
մնայի կապված սյունին
ու մտքիս յեկքը ծեփեր
ժողումը դառն թույնի...
Պրծում եմ իմ շրթները
հույզերիս թափից հորդուն,
յես շերմել եմ, քրտնել եմ,
սրտիս մեջ մահ եմ մորթում:
Կարոտիս կատղած ցուլն ե,
վոր կտրած պախուրց ու կապ,
բառաչով կուգե ձուլել
իրարու հետ ինչ վոր կա:

3.

Պիտեմ՝ ախտը կրծել ե
կամքիս մետաղը վճիտ,
բայց կյանքն ուղիս գծել ե,
կյանքը ավել ե վճիռ:
Թող, վորպես պատուած թմբուկ,
թոքերս թրթռան թույլ
ու հեռվից մի փոս աամուկ
ինձ աչքով անի անդուլ:
աչքիս առջևից անհույս
թող անցնեն հազար դազազ,
կոկորդիս փողիցը դուրս
թող հագս գլորդա, գա,
վորպես դիակով բարձված
ոռավից դարձող շոգեկառք,
թունելում ծղրղա հանկարծ,
դղրղա ցնցող հոգեվարք. —
վորպես մի կատղած Ռուանդ,
վերջին վարկյանին մարտի
այնպես զարհուր կպռուտ,
վոր շնչափողս պայթի:
Կպռում «Լսեք, Էյ դուք»
ինձ խեղդում ե «t. b. c.» — ն,
բայց սիրտս լիքն ե ինդում,
գոռում եմ՝ կյանքը կեցցե...

Ա. ՅԵՐԳ

1.

Ձմեռ. ճերմակ սալստու.
լեռներ սառցա կառույց,

ամեն շարժում՝ զարհուր,
 ամեն առու՝ սառույց:
 Քամի, քամի, բամբին
 չափ ե ավել բաշին,
 վոր մի թափով գամվի
 սառցե աղառաժին:
 Վորպես բանակ ջարդված,
 խոլ անտառը դեմի
 փռել ե մի պարտված,
 ճերմակ դրոշ հիմի:
 Գորշ, հարաշարժ մի մաղ,
 — ո՞վ սիրտ կանի գիտել, —
 ճոճվում, թափում ե պաղ
 մեռած հույսեր թիթեռ:
 Ամեն ճյուղ ու ցվիք
 կախել ե սուր մի զեն,
 վոր դուրս յերևա՝ ցցվի
 սիրտդ, ճեղքե, կիտե:
 Աչք չբանաս — դիտես,
 նայվածքդ յետ կմզվի,
 սառած, սուր նետի պես,
 ակնախորշդ մեխվի...

2.

Բայց յես գիտեմ մարդիկ,
 պողպատ կամքեր գիտեմ,
 վոր յելել են մարտի
 իրենց հին բաղդի դեմ:
 Մաքառում են առույգ,
 շանք են թափում հիմա,
 շարդում ժայռ ու սառույց,

շտկում փողոց ու մայթ:
 Ել ի՞նչ դաժան հարված
 նրանց պիտ կոտորի,
 վոր անցել են վառված
 հազար մի փոթորիկ:
 վոր դաշտեր են հերկել,
 մզվել սրստորե
 կյանքն արեվով ներկել.
 ցանել հույս ու ցորեն՝
 քրտինքով են թրջել,
 վոր կորթ արտը տա հասկ,
 բայց հնձել են, հնձել
 դառնություն ու գառասկ:
 Դատարկ ու հուսաբեկ
 գեղորայքից անհաց
 ուժը ել խուսափեց,
 քաղաքները գնաց.
 մտավ նկուղներ գեջ,
 դարձավ մի սյուն հարմար
 ու վեր բարձրացրեց պերճ
 ապրանքներ մարմար:
 Խնքը լեզի կերավ,
 մնաց ծարավ ու ծոմ,
 իր ուսերի վրա
 պարեց վայելքը ցոփ:
 Սակայն մի որ վորձկաց
 քաղաքն անբարտավան.
 նկուղներից պոռթկաց
 ուժի քանդիչ լուվան...
 Հիմա քանդում են դեն
 ամեն մի հին արդեք

ու դնում են արդեն
կյանքի նոր հիմնարկեր:
Ու սառուցից թեկուզ
գետին ու սիրտ ճաքեն,
նրանք ետոր-եզուց
նոր կյանք կհոշակեն:

3.

Գիտեմ և մարդիկ կան,
վորպես տանու կատու,
վոր դուրս յեղնելն անգամ
մահ են հաշվում հատու:
Նստում են յեղկ ու մեղկ
անվերջ որեր վատնում,
փակում են դուռ ու փեղկ,
սին հեքյաթներ պատմում:
Ռումաններ են հինում,
ծամում սեր ու չամիչ
ու սուզվում են հնում,
յերբ վոռնում ե քամին:
— Աշխարհը տուն մի փակ,
ներսը գոլ ու տաքուկ,
խելառ քամին հապա
դուռն ինչո՞ւ յե թակում:

Բ. ՅԵՐԳ

1.

Ումն եմ յես. ի՞նչ եմ յես.
դու վոր հաղթող ես,
սրտումս կճեմես,

չգիտես թե ով եմ:
Բայց քեզ միայն բավ է
յերկու տողով հուշեմ
այն ահուկի ավերն,
վոր իմ յերկրում խուժեց.
Իսկ յես մեկն եմ դադված
այն անոր մեկերից,
վոր մաղապուրծ փախան
ուրունների յերկրից:
Յերբ կյանքը գեջ, տամուկ,
արյան լիճ եր, ճահիճ,
յես՝ լուսեղեն մանուկ՝
փախա դաժան մահից:
Ճամբաս ցուրտ ու բուք եր,
վոչ մի ջերմացնող հուր,
միայն դիտբուրգեր
տեսա յես ամենուր:
Փախա: Յավիս նման,
իմ մարմինն ել մերկ եր,
հազած ուներ միայն
արնաշղարշ վերքեր:
Բերի ցավեր մռայլ,
վոր հարվածով բացին
կյանքիս ծառի վրա
հին որերը՝ կացին:
Սիրտս ինչեր տեսավ՝
մի վիրավոր բազե,
շուրջս սուր ու հեռան,
ինքը անթեվ, անդեն...
Բայց յես ի՞նչ եմ պատմում,
թող հուշերիցս ընկնի

այն սարսափն տնհատնում,
հին խաւարում քնի.
կամքս՝ կարծր զրահ՝
թող հույզերս զսպի,
թող իմ սրտի վրա
խամբի ամեն սպի:

2.

Ահեղ այդ սարսափից
կարծում ես թե բռն իմ,
և վոչ մի նոր ափից
ինձ չեն կարող գյուծել.
կարծում ես հաշմանդամ
սիրան իմ, թմբած խլուրդ.
կամ գորշ մի շամանդադ
իմ արեւն ե խլում.
կարծես գանգումս գեջ
փուշ մտքեր են մղում.
կյանքը ուղի, յես՝ խիճ,
ներկան փշրող քլունդ...
Ո, վոչ, լսիւր, ահա
ծառացել ե հոգիս,
նրա տուջե հիմա
մահն ե, վոր պիտ չոքի:
Որերն հիմա այնքան
յեռ են հրի, աքնի,
վոր մեռելը անգամ
զազաղից կհառնի...
կյանքիս մայրամուտին
ընկնում եյի մենսկ,

բայց որերն անութիս
ավին հզոր հենակ.
ու սե անկումներից
յեւա որը որին
և կապեցի նորից
կյանքս պայծառ նորին.
ու տեսա, վոր հեռվում
արշալույսներ դեռ կան,
վորոնցմով ե մերվում,
մեր կարմրափառ ներկան:

3.

Որերը կարմրավուն
թուշք, թրթիռ, վոստյուն,
ավին այնքան ավյուն,
ավին այնքան խոստում.
այնքան պայծառ եր, բայց,
արեներով եր լի
պոեաների յերգած
գալիքը անձկալի:
Ո, այնքան դուռ կար բաց,
այնքան ուղի կապույտ,
առավոտով արբած,
թողած ամենն անփույթ,
սիրտս՝ գիշերից սառ
կուզեր ընդմիշտ փախչի,—
դու թուխքիս հասար
մաքառումի աղջիկ:

Գ. ՅԵՐԳ

1.

Թող գարուններ յեռան,
կյանքը հրաշք— ծնի
ու թող բերնե բերան
լի գոհություն անցնի.
Թող հովացած լինի
ամեն այրող սուր վերք,
հոսի հույսի գինին,
լուսով արբեն ամենք.
Թող սրտերում հասկի
վոսկի խինդը վաղվա,
յետ չմնա վաղքից
վոչ մի հնով խաբված,—
մեկ է, սերը կդա
քմայքներով հատուկ.
Խինդ կբերե ազահ
և կամ սրեր հատուկ.
Քեզ կծուլե նորին,
իզձերդ կշոյե
և կամ կուզե նորից
սիրտդ հնին գոհել:
Կուզե գոհել, և դու
կցնցվես ուժեղ,
կասկած ու յերկմտում
բաց սիրտդ կխուժեն:
Ու պետք է վոր հատու,
քան պատյանից հանած,
սուրը մերկ, մահատու

վճիռդ մերկանա:

Պետք է կտրես հպարտ
ամեն արգելք ու թել,
վոր կրկապե ճամբադ,
կուզե հնով գյուլթել:

2.

Կուզես կամքդ խառնիր
հազարների կամքին,
թող յեռումը արնիդ
մշուժ տա այլ կյանքի.
Նյարդերով բարակ
հյուսվիր դու այն կապին,
վոր այսօրը տարավ,
կապեց վաղվա ափին.
միակ ակունքն յեղիր
հազար մտածումի,
կուզես միակդ յեղիր
սիմվոլ խառցումի,—
մեկ է, ինչ վոր խորքում
կա մի յեսի նշույլ,
հաճախ բաց, բորբոքուն,
հաճախ սանձած նոսրյգ:
Ու սիրտդ կցանկա,
ինչ վոր յեսդ կուզե,
ինչ վոր դյուլթիչ բան կա,
ինչ վոր հմայք ու սեր:
Սիրտդ կգալարվի,
ցավ կիջնե քո հոգում,
դե թող կամքդ լարվի:

փնտրե ճար ու ոգուս,
հողն ե, վոր կցանկա
բոց արեից կիզվի,
դե բեր կամբի տանկա,
վոր այդ տենչը ճգմի:

3.

Սիրտդ պիտ մակարդվի
ել անխուսափ սիրով,
պիտ հղանա, բարդվի
կյանքդ նոր հույզերով:
Նոր որերիդ յեթե
սերդ հակաբեռ չե,
դու ավելի թեթև
գալիքին կթռչես:
Իսկ թե մաղձ ե բերում
կյանքիդ համար լեզի,
հիր որերի հրում
մի դառնություն դեղին, —
պիտի սիրտդ բանդեն
կապեր հազար ու մի,
կյանքդ դառնա հանդես
դաժան մաքառումի:
Թե կարող ես, յեւ դու
հակադեմներ հանած,
թող մահի պես հաաու
վճիռդ մերկանա:

Դ. ՅԵՐԳ

1.

Կյանքիդ այգաբացն ե,
նոր ես զարթնել հիմա.
հազար հրաշք բացվել,
փովել են քո դիմաց:
Յեւադներիդ վերջին
մշուշները ցրված
ցող են թողել վճիռ
թարթիչներիդ վրա.
ու մի խոնավ կարոտ,
շաղի նման ծաղկի,
սպասում ե կարող,
բոլոր արեածաղի:
Դեմքդ շառագունել
չեկ հույզերի խաղով,
շրթներդ շոք, դունեդ
վառվռում են վախով:
Յերկու ճերմակ դառնուկ
աշխույժ, անհամբերում
կրճքիդ վրա կայտուում,
սարսուռներ են փռում.
ու խաղը կարմիր,
արյան նման վազուն,
քաղցր տազնապ ե մի՝
կոնքիդ համար հասուն:
Ու զարթնել ե անմիտ
առնակարոտ մի տենչ
կնոջական մարմնիդ

ամեն մասնիկի մեջ:
Քույր ես յեղեղ մինչ այս,
այսոր կրակ կին ես,
յեկրորդ ճիշդ ճշատ,
յերրորդին՝ մայր լինես:

2.

Ել անխուսափելի
կյանքի մի նոր վտուր
դեմդ բաց թափել ե
հապքներն իր բոլոր.
ու հողի պես խոնավ,
վոր արգանդը լի սերմ՝
կուզե հուր անխնա, —
դու կապասես մի սեր:
Պետք ե, վոր դու արդեն
տրվես մի նոր հրե,
հին սրերդ բանդեն
յերկրում քս հուշերի:
Կուտու թյունդ թաղեն
կարմիր պատանքի մեջ,
նոր դոնականեր բախես
միշտ նոր, նոր կյանքի մեջ:
Լինես դու կին ու մայր,
բնկեր լինես մի նոր,
նոր հույզերի գումար,
աարված մի նոր հիմնով:

3.

Բացել եմ յես ահա
իմ աշխարհը այս նոր,

հին հուշերս պահած
հնում իմ հեռավոր.
ու որ որի վրա
նոր տենչ, նոր մաքառում
բերում են նոր կրակ
ու կարսաներ վառում:
Սիրտս անոր, բեղար,
չարչարանքի խորան՝
մեկիլ, մեկել տեսար՝
փլվեց ինքն իր վրա.
այդ քանդումից խելառ,
վորպես կյանքի կարոտ,
տեսար փյունիկն յեղավ,
այնպես նորոգ, կարող...
Մհա, սիրտս կրկին
նոր յերկունքի մեջ ե.
բարի յեկար, դու, կին,
բարի բերիլ տենչեր:
Նոր արյունի զրգիռ
ու առնական զալար,
նոր կրակներ կրքի
առնորում են խելառ:
Զարթնել ե իմ սրտում
հույզերի նոր վտառ.
ո, քաղցր խլրտում,
ո, արբեցում խելառ:

Ե. ՅԵՐԳ

1.

Կյանքս ընդմիշտ հսկեց
դեռ նոր եր խուսափել,

նոր եր ժպտացել ինձ
 այգը վառ, լուսաբեր,
 յերբ դու յեկար, վորպես
 մի անխուսափ հանգույց,
 խճճվեցիր սրտիս,
 բերի՛ր հույզեր անբուն:
 Քո սերը՝ թվաց թե,
 վորպես մի լուսաբեր,
 կտանի ինձ արդեն
 դեպի նոր լույս ափեր,
 ու հեյզերը սրտիս,
 ուր սերդ եյիր մեխում,
 անփուլթ ամեն ցրտի՝
 կստանա նոր մղում:
 Բայց ի՞նչ. դու իմ սրտում
 փռեցիր նոր դառուն.
 բերի՛ր լոկ յերկմտում,
 բերի՛ր նոր մաքառում:
 Դու ցանկացար մշուշ,
 վոր ինձ անտես դառնաս,
 ցնորք լինես ու հուշ,
 յես բարձրանամ Պառնաս.
 խորհեմ, — ցանկացար դու,
 թե դու չունես մարմին,
 վոր նման չես մարդու,
 չունես կրքեր կարմիր:
 Դու ուղեցիր փակվին
 առջև ուղի, կածան.
 ինձ սրերի վազքից
 պոկել դու ցանկացար:
 Լինել մենակ, թմրած,

անթե՛վ, անու՛ժ հոգի,
 յերագներով խամբած
 կապված մնալ շուքիդ:
 Սիրտս խորտակ, հրվանգ՝
 մի մատուռում նստի
 ծխե անհաս անվանդ
 խունկի խոհեր միտիք:

2.

Բայց իմ կյանքը փյունիկ
 ի՞նչպես նորից դառնար
 մոխիրները հնի
 կամ բարձրանա՛ր Պառնաս:
 Ել սրերի ութմին
 սիրտս ի՞նչպես գաղտուկ
 պիտի խառներ ի մի
 տրոփներն իր տաղաուկ:
 Կատղած որ ու գիշեր
 սիրտս՝ արյան հեյզեր՝
 ի՞նչպես ել չվիժեր
 կիրք ու կրակ հույզեր...
 Հա, ուղեցիր դառնա
 սիրտն իմ մի շատրվան,
 ցնորքների դարնան
 պարտեզիդ մեջ դրված:
 Ու դղյակիդ անհաս,
 միրաժ վերնահարկից
 դու նայեյիր վրաս,
 ժպտայիր առհարկի:
 Շատրվանը վիժեր

շարաններ մարգարիտ,
 խփեր որ ու գիշեր,
 արցունք թափեր անմիտ:
 Լճանար ու հուզվեր
 մի ավազան խոհուն,
 նրա մեջը ժրսեր
 մերկութունն իմ հոգու:
 Ու լցնեյին սիրով
 յեթերներդ պարապ
 յերազներս խոռով,
 կարոտներս կարապ:
 Ու դու յելած բարձունք՝
 ցած նայեյիր վերից,
 ավազանում արցունք
 քեզ տեսնեյիր նորից:
 Սիրտս անգոր մնար,
 ցավի ներքե կրքեր,
 քեզ չհասներ բնավ
 ինչքան փրփուր թրեր:
 Շուլավեր գեպի վեր
 կատաղության հեյզեր
 ու սառած յետ թափվեր,
 նորից սիրտս ժրսեր:

3.

Թարթիչներից իմ վար
 դեռ նոր եյին ընկել
 գիշերները խավար,
 շղարշները մեզե:
 Մտքիս ուղին հարթ եր,

ել ազատ եր մութից,
 չեք հավատում արդեն
 միտքս անհայտ ուժին:
 Դու կին, շնչող մարմին,
 առնաբազմ ու հասուն՝
 ուզեցիր, վոր վառվիմ
 պատրանքներով յետ սուտ:
 Յերբ ել չկար Պառնաս,
 առաված, առավածուհի,
 ուզեցիր ալ դառնալ
 միտքի մտածումի:
 Ել չկա սին յերազ,
 գիտեմ կին ես կրակ,
 դու ել ինձ պես կեռաս
 միայն հոգի վրա:
 Յեթե կուզես վառի
 սիրտն իմ կրակը քո,
 թող միրաժներն, արի
 ալըող ու առապ կրքով:
 Բեր լուսեղեն հույզեր,
 սիրտս բոցով հերկե:
 Բավ ե, շատ եմ հյուսել
 մշուշների յերգեր:
 Ել որերի չուին
 դու զուր մի դեմ դնի
 ինչ վոր «Աստվածուհի»
 ինչպես սերն յերբեմնի:

2. ՅԵՐԳ

1.

Վորդն ես դու ահնարկումս
 Կյանքիս տճր կրծող.
 Իմ ցավը ահարկու
 սե ու սուր կսկիծով,
 ու մատներիդ վրա
 հաշվում ես որերն իմ,
 այսոր թե չմեռա.
 վաղը պիտի մեռնեմ:
 Բնավ, բնավ չարժե
 հյուսել կարճուկ մի սեր,
 սիրտը ցավով մարդել,
 նստել մենակ, մրսել:
 Լավ ե՛ք քանի յես կամ
 սիրեմ հեռվից հեռու,
 սակայն յերբեք չզգամ
 ջերմությունը սիրուդ.
 ու յերբ վոր քեզ հասնի
 մահիս բոթը տխուր,
 աչքերդ արտասովին
 ու հեկեկաս դու խուլ...
 Ուղում ես այս լինի
 ամբողջ սերն իմ կյանքում. —
 վայելքն յերազ լինի,
 տենչը՝ հսկում անքուն:

2.

Սիրա իմ, դու գալարվիր,
 դարձիր կարմիր կծիկ

ու կատաղի ցավիդ
 գայրույթը վեր գցի,
 ու թող ընկնի նա վար,
 կապարի պես ճնշի:
 նորից վերքիդ ցաված
 գալարքները ճնշի:
 Ահա ապրում եմ, կամ,
 կայառող հրի պես ժիր,
 բայց պիտ ապրեմ անկամ,
 կյանքն ինձ սիրել մերժի:
 Ուռչի սիրաս սիրով
 ու պայթելու հասնի,
 բայց չգանի սիրող
 մի ջերմություն ազնիվ:
 Կյանքը մոտս յեռա,
 լինի կարմիր հրձվանք,
 իսկ յես, դեռ չմեռած,
 դադարում մըխրճված:
 Հյուսվի ողակ-ողակ
 կյանքի յերթը գնգուն,
 իսկ յես կանգնած դողամ,
 իսկ յես թաղվեմ սգում...
 Վտոնա, սիրա, դառնակոծ,
 հրում քո տապակվիր
 ու, վորպես այրվող ոճ,
 կըծկվիր ու պրկվիր
 և թող լարած նետե
 քեզ աղեղը կամքիդ,
 սիրա, սլանաս թեթև,
 հասնես փախչող կյանքին:

Իսկ դուք, վոր կաք հիմա
 կյանքի յեռ ու զեռում,
 Ինչ ե, զժնե մի մահ
 ձեզ վախճան չի՞ բերում:
 Ո, անխուսափելին,
 Ինչ ել լինի, կգա,
 այդ չե սարսափելին,
 սիրտ իմ, զուր մի սգա:
 Ամենքը մահ ունեն,
 կյանքն ու շարժումը լոկ
 հավերժ ու անհուն են,
 հավերժակա՞ն քայլող:
 Ու թե քու հրերից
 այդ յերթին տաս մի մաս՝
 մահից հետո նորից
 կյանքի մեջ կմնաս:
 Զգաստ յեղիւր, հանդիսա,
 դու չգիտես հիմա
 մահն ե վերջը կյանքի,
 թե՞ կյանքն ե մահին մահ...
 Այսոր, այսոր թե կաս
 ու ապրում ես վաղով, —
 այդ ե կյանքը, զգաստ,
 մի տրտնջա, Վաղո:

ՎԵՐՋԵՐԳ

1.

Իմ ցավը սուր ու կծու
 Ինչ ե արեւի հանդեպ,

Իմ ցավը փուտ ու փցուն
 ու դառանցանքն արնատենդ:
 Ինչ ե բյուրերի զիմաց
 լոկ մեկը իր ցավի հետ.
 Ինչ ե տրտունջն անիմաստ,
 յերբ լայն ու բաց, ծավիլի յեն
 կյանքի դաշտերը, կրկին
 արեւով են վողողուն.
 Ինչո՞ւ, ինչո՞ւ ընկրկիլ,
 յեթե նույնիսկ գորշ հողում
 չար վորդերը անիմաստ,
 լոկ ապրելու բնագդով
 սպասում են, վոր գնաս,
 վոր իրենց կեր գնաս դու:
 Քանի աչքերդ բաց են
 ու լույսեր են խմում շեկ,
 ու մղումով ընածին
 ապրելու տենչն ե ուժեղ. —
 դու ապրում ես ու կաս դու,
 զուր ես տրտունջ առաքում.
 յեղիւր զգաստ, իմաստուն,
 կզգաս, վոր չես տառապում:
 Իսկ թե տեսար ավելին՝
 պայքարները արնավառ
 ու զգացիւր, վոր ելի
 ուժ ունես դու դրա համար, —
 մարտի կեղեւս նոր հիմա
 ճակատ ընդդեմ ճակատի.
 կյանքդ կառնե նոր իմաստ,
 ել սե թույնը չի կաթի:

Հեռուների բացում բիլ
 ափելի լայն սերեր կան,
 դու սրվակը բաց, ըմպի
 գինին վոգեվորության:
 Ել մի լինի ունկնդիր
 միայն սրտիդ ձայնին թույլ,
 յերգի մի նոր լար գաիր
 ու նոր սերի ձայնիր դու:
 Յերկմտանքի գորշ փռչին
 մաքիդ վրա չթողնես,
 ու հույզերիդ գոլորչին
 թող հայելիդ չբողես,
 վոր ցոլցլա նրանում
 գալիքն հազար ռանգերով,
 այն սեր լինի հրահուր,
 թե այլ գյուլթանք քեզ գերող:
 Յավիդ յերեկն ու ներկան,
 վորոնցից սիրադ ե հեվում,
 ծեփված մնան թող յերկար
 քո հայելու հեանում,
 վոր մութ լինի թանձրասե,
 լինի վանող, ահալի,
 վոր գալիքը սրալի
 չթափանցի, անցյալին
 չձուլվի, գուր պղտորի
 հուղանքների ծովը քու.
 հին հույզերի փոթորիկ
 թող չզարթնի քո հոգում:

Յես հիմա ել գիտեմ, վոր
 սրտիս վրա մի խոց կա,
 մահի նման ահավոր,
 վոր կյանքում մաղձ կվորձկա:
 Գիտեմ՝ ախար կրծել ե
 կամքիս մեռաղը վճիտ,
 բայց կյանքն ուղիս գծել ե,
 կյանքը ափել ե վճիտ:
 Յես խեղդում եմ առնապես
 կոկիծներս, ցավս սուր,
 յետե ել չեմ դառնա յես,
 նոր կանչի ձայն եմ լսում:
 Թող ուսերիս խոյակին
 ցավն անցյալի ծանրանա.
 փառք կյանքի նոր խոյանքին,
 մարդ կյանքից չի ձանձրանա:
 Թող ինձ խեղդե «t. b. c.»-ն,
 մերժե սերն ինձ անսովոր,
 գոռում եմ՝ «կյանքը կեցցե»
 ու գնում եմ ԿՈՄՍՈՄՈՒ:

ԱՌՆԱԳԻՆ ՈՐԸ

1922

ԱՌԱՋԻՆ ՈՐԸ

‘Նրանց’ գուր 1921 թվի փետրվարի
25-ին Թիֆլիս մեան

1. Առավոտը թոն էր, թաց էր...
ով գիտե՛ գիշերն էր լացել
իր մահվան յերկունքը սև,
թե՛ այգը մի վեհ հեզնանքի
ժպտով էր թացել
գիշերը կյանքի,
վոր բողբոջելին ծաղիկներ լուսե...
2. Նախազգացումներն անհանգիստ, ըմբոստ
արշալույսի ճաճանչների հետ
մթնոլորդն եյին հուզում,
ու քաղաքը՝ մի խելագար յերազից ընդոստ՝
բացած յերախներն իր խայտաբղետ,
արև էր ուզում...
3. Քաղաքի վրա դեռ նոր էր ծաղկել հրդեհի մի վոստ,
խակ հեռվում յերկինքը հուր էր և ալ.
յերկիրը գազազած կիրք էր,
յերկնի ու յերկրի շուրթերի՝ վրա
մի դեղնաշեկ գունդ կար,—
մի հասուն միրգ էր,
վոր ամեն մեկը ճգնում էր կուլ տալ...
Դուրս պրծավ. միրգ չէր,

հրե անիվ եր,
արեն եր,
սկսեց յերկնի վրա շրջել:

4. Մի այլ կառք,
այլալված, անկարգ,
արագ-արագ
ու շրջիկ-շրջիկ
նետվում է փողոց.
Վորպես մոլի անառակ՝
գրկել է յերկու աղջիկ.
աղաններն է կըրճատում,
ցնցելում կըրճից
ու... դողոց, դողոց...
կառքը վազում է.
կառքի յետևից վազում են
կերկեր-յերգեր՝
ծեծված շների կողկանձների պես,
հուսահատ ու սուր.
ու հետո, կարծես,
մոր դիակառքի յետևից վազող
վորք մանուկների նվոցը իզուր...
կառքը վազում է.
կառքում հազում են՝
վռազում են,
ուզում են փախչել...
Ձե՛ վոր արեւ շեկ
արդեն շրջում է.
նրանք ել, վորպես գիշեր,
գիշերի հետ փախչում,
թռչում են,

արեւ նրանց քշում է:

5. Ահա բռնել են կառքին:
6. Մեծ հրապարակն է, սիրտը քաղաքի,
հոսանքը մարդկանց ու անխելների,
հույզերի նման, շարժվում են, յեռում.
ու արյան նման, հոսանքը յեռուն
մեծ յերակներով վազում է մարմնի
հեռու մասերում...
(Ժամացույցը զիլ, լսելի
զնգում է՝ «Մեկ».
ու ժամանակի մի նետ՝
վորպես տողը գազելի,
սլանում է յետ,
կառքն ել անաբեկ
կրկին ծանրաբեռ՝
յերգերն յետևից կերպեր, վետ-վետ
վազում է թռչող
ժամանակի հետ):
7. Ու հեռուններից, պղտոր արյան պես,
զայրույթի չափ անավոր
ու սիրտ պես արդար,
հոսում եր այդ որ
անծիր, անդադար
մարդկանց հոսանքը հոծ
փողոցի փողոց,
գալար ու գալար
դեպի անագին
սիրտը քաղաքի:
Իսկ սիրտը արդեն նոր տեմպով եր զարկում

հրապարակում

միթինգ եր հսկայացույց.

հուլիս, զայրույթն ու գրգռու

ողակ-ողակ, հանգույց և հանգույց

(ուժի պես ելեքարիկ)

բյուրավոր իս հսկայի մեջ

նոր սարսուռներ ելին ցրում,

հսկան դողում եր, փրփրում,

ծավալվում անվերջ ու հոծ,

ովկյանի պես ալեկոծ:

8. Ու, ծովի մեջ բարձրացող ալիքների պես թարթառ,
բարձր ճակատներ կային՝
պսակված նոր խորհրդով ու աստղերով կարմրա-
ու լսում էլին. (վառ,

հսկան, քնից հանկարծ դարձնածի պես

իր կիսատ յերազի լրումն եր տեսնում

ու լսում եր՝ հավատարիմ այդ յերազին:

Ուսում էլին.

հսկան պրկվում եր, ձգվում,

գալարվում, լարվում եր,

բարձրանում մասների ծայրին՝

լսում եր.

խոսքերը սրտի մեջ ընկան.

բարձրացած մասների վրա

նա ուզում եր

տեսնել բերանները քուրա,

տեսնել խոսքերը կրակ,

վոր թռչում էլին գեպի՝

ապագան:

Արևի կառքը զենիթից իջնում եր.

արևը, կարծես, յերգում,

զնգում եր, կանչում եր,

զանգ եր՝ դողանջում եր,

դողանջը զիլ եր.

հսկան լսել եր.

արևը հիպնոսում եր՝

ուզում եր յետևից գնան...

9. Յեվ յերբ արևը ինքնակեզ
յերկնի ու յերկրի շուրթերի վրա
ձուլումի համբույր եր վարդե՝
միթինգը թավաժ շեկ բույրով նրա,—
հոսում եր արդեն.
զավաժ արյան պես,
քաղաքի սրտից հոսում եր,
ուզում եր վողողել փողոցներ,
մայրեր.
հետո քաղաքներ, աշխարհներ,
ծովեր ու հարթեր...
մինչև աշխարհի ծայրերը հեռու
ձուլել իրարու:

10. Արևը՝ հզոր արու՝
բեղմնավորել եր սրտերը ամուլ
ու սրտերում հանուր
արևի յերգն եր զնգում.
արևի յերգը զնգուն
զըրնգում եր ամենուր:

11. Ու հիմա գիտեմ՝
թե ինչու թռան
և ուր են թռել,

սիւ ե թոցրել, ցրել
էն կառքը կռկոտն,
էն նուրբ աղջիկները
ու էն յերգերը լալկան:
Թոտն,
գնացին-մեռան:
Յեկան, յեկան, յեկան
արեւի յերգերը հրե,
բերին, բերին
ապագան:

ԼՈՒՍԱՅԳ

1924

Լ ՈՒՍ Ա Յ Գ

Ու պոեսսներ, վոր չեն պղծել
իրենց շուրթերն անեծեով,
պիտի յերգեն քո նոր կյանքը
նոր յերգերով, նոր խոսքով:

ՀՈՎՀ. ԹՈՒՄՆԱՆՅԱՆ

1.

Ո՛վ առավոտ, վոր բացվում ես,
վիթխարաթերթ մի ծաղկի պես,
ու ծավալում բույրերդ լույս
ու լույսերդ՝ բույրեր սնդուս՝
տիյեղերքի մութ ավերում
ու մրափը կյանքի բերում:
Ո՛վ առավոտ, թեթև ու հեշտ,
բայց վորպիսի՝ անհրաժեշտ
յերկունքներով ու պայքարով,
խավարի դեմ այնպես կարող
պոռթկում ես դու հուր լուսաթափ,
դու կյանք, մահի պես անխուսափ:

Դիշեր. վիթխարի մի թև՝ կախված անհուն բարձունքից,
ու սե, սարսափի պես սե, ու ծանր քան մահի կակիծ:
Ծավալված անհայտ ահուկներից՝ փռված ե մահի մի ծով,
խուլ ծովում հրի բյուր բիծ՝ կապված նվազուն զծով:
Մութը մահի պես բարդ է. բայց գիշերվա անդունդը
հատակ ունի, և արդեն թույլ նոսրանում է մութը:
Սարսափից՝ հույսի յեկած աչքերը թարթում են թույլ,
բացվում են կամաց-կամաց, լայնանում, ձուլվում են ծույլ:

մուտը թեղ ծաղկում է աններկատ, մութը մաշվում է
 ու հալվում, ծաղկավում են լույսն ու լույսի շարժումը...
 Մութը պարտվում է անկամ ու տեղի տալիս լույսին...
 և, վորպես լույսի պատգամ, յերկնահաս լեռան ուսից
 նիզակներ, նետեր, տեղեր ձեղքում են լազուրը հարթ
 ու լազուր լայնը մեկին ժպտում է շեղ ու գվարթ...
 «Նահանջիր, հաղթված զիշեր, նահանջ, նահանջ ու նահանջ»
 գիշերում խեղդված ձիշեր հառնում են լուսապահանջ:
 Մի համբույր հեռվից, հեռու լեռների ճակտից սահում,
 իջնում է դաշտերը բերկրուն, հասկե վարները շոյում:
 Ու անտես, անթիվ ձեռներ հզոր մի թափով թևի
 նետում են յերկինքն ի վեր հրաշակ գունդն արևի:
 Նա անհուն ճամբի ծայրին վառվում է, վորպես դրոշ
 հետո վզին պայքարի բռնում է ուղին վորոշ...
 Մտվերներ յերևր ու թուլ, ջարդված բանակի բեկոր
 նահանջում, ցրվում են ծուլ ձորերում անդնդախոր.
 գնում են լուս մեռնելու, կամ լոխն... լույսից անտես
 մթին դավեր խորհելու՝ նոր գիշեր հանել հանդես...
 Իսկ արևն հաղթ, հրաբանջ, պայքարի հրե գրան՝
 քարձրանում է աններկած, կապույտ գինիթի վրա:

Մութի վորպիսի պարտումն լույսի դեմ. լուսթյան մեջ
 լույսը մի աչք է արթուն, վոր կարողում է եջ առ եջ
 մութի թերթերը մույլ հանգուցով, հարցով լեցուն
 ու մեկնում կյանքի վրա իմաստը՝ պայծառ լուծում:
 Լույսը մութի ծնունդն է ու մահացնողն է նրա,
 մութը պարապ անդունդն է, լույսը լցնողն է նրա,
 լույսը ծնվում է բանգում, մութի մեջ ահ ու մահի
 ու հետո բանալը քանդում պոթկումներով ամենի:

2.

Ո՛վ այգաբաց, լուսե սաղավ,
 իմ Նայիրի, սիրտ լուսատապ,
 նայիրաբաղձ իմ կարոտին,
 քո աներկրորդ առավոտին

և արևին քո բոց ու բարկ
 վողջոյն և փառք, վողջոյն և փառք:
 Սալարի մեջ հուրդ կրող,
 տանջանքի մեջ կամբղ կռող
 դավակներին քո արնածին,
 վոր փակ բախտիդ դուռը բացին,
 ուսկից ցուաց արևն ես բարկ,
 վողջոյն և փառք, վողջոյն և փառք:

Առավոտի թևերը վառ մաղում են ցած լուսե փռի
 ու ցնդում է յերազը մառ, վոնց արևի տակ գուրջին:
 Կյանքը մառած արևի տակ, նրա լուսե ծիծն է ծծում.
 մի պահ թողած, բաց միշտ անհաղ նա գլուխը վեր է ցցում
 ու պոռոչում պյակես անեղ, վոր ամեն մի մասնիկ զգաստ,
 յեթե կյանքի հուր է պահել, այդ պոչյունի թափը զգա:

Ահա գյուղերը գեանաթաղ՝ խրճիթներով խլրդաբույն,
 քաղաքները քնաթաթախ, ավանները մեր գորշագոյն
 խայթված հրով մի անխուսափ, վեր են թռել գոչից ընդոստ.
 դեղին տենդից արդ հիսաթափ՝ նոր արևն էն դիտում ըմբոստ:
 Ու թափվել են հողի վրա հողի տակի հյուղերը թոն
 ու ծծում են արևը՝ Ռա. յեթե մի նոր Քսենոֆոն
 վաղը անցնի մեր աշխարհով՝ ել չի գտնի կյանքը անկամ
 մեր հյուղերում հողերթիկով, քաղաքներում նայիրական:
 Գյուղը արև եր ուզում, յերը արևն արդեն սռավ,
 գյուղին գալիքն է հուզում, գյուղը ելի յե ծաղավ...
 չի ուզում սայլի ճռինչ, վոչ ել դդում բոստանում,
 գյուղը ուզում է ել ինչ.— ինչ վոր ուրն է խոստանում...

Գետերը թևեր ունեն, թևերը թրի թափ են,
 գետը հանում են հունից, ձգում են նոր-նոր ափեր...
 Դաշտերը ել չեն տենդում, չի իջնում ժանգ ու խորշակ,
 դեղին յերաշան է ցնդում ջինջ, հնչուն կարկաչի տակ.
 ցնդում է ծաղավը չոր, հիմա ծաղավեն պիտի
 յեղուկ ձկները տոչոր, ուղեփոխ, լքված գետի:
 Դաշտերը լուսե լիճեր՝ գետերի ուժով վառած.
 արտերը լուսեղ շիշեր՝ մի կապույտ թելի շարած:

Լույսից ամենքն արբել են, բայց ելի զգում են պարզ՝
առավոտն յեռք և բերել, չվում և բյուր մեղվապարս,
վոնց գնդացիքն եր մազում, բզեզներ թռնոտ ու չար,
յերբ կյանքը սև դազազում անլույս, անգոր կճըչար...
Դաշտերում, աշգում, հանդում լույս և՛ առավոտ, շարժում,
լույսը մշուշ և քանդում, արեւ կյանք և բաժնում...
Յերեկը՝ սիւս լույս արտեր, գիշերը՝ լուսողող քուն,
իրիկուն՝ բաց և ճամբեն՝ հանգից ձգված գետի տուն:

Նայիրական գորշ քաղաք, մահի ճամբի սև ավեր
արնով խեղդված աղաղակ ու սև կտրած սարսափից,
կյանքից ընդմիշտ հուսախաբ՝ մահին ելիր զոհացու,
բայց ստացավ անխուսափ վերջին իղձգ գոհացում.
ու լուսացավ այնպես պարզ քո գիշերը անկրակ,
հիմա արեն հրավարս խինդ և թափում քո վրա.
եւ գոցվում և ամեն վիհ, ցավը խաթթում և սակավ,
դու ծծում ես արեւի ստինքները լուսակաթ:
Ու փռել ես սիրտդ բաց առավա գեւ հուրհրան,
վոր հողմերը սրբնթաց լիզեն վերքերը նրա,
լեցնեն արյուն ու կրակ նոր սրերի հորձանքից,
մզեն յերակ առ յերակ նոր հուզումներ անկսելիծ:
Պինդ ջլերով լուսալար ողակվել ես դու գյուղին,
ու այդ գյուղը լուսավար, առանց ահ ու յերկյուղի,
հողի ամբողջ բերքը հում քո ուժերին կղահի.
ու բարիքը անհատնում լինում և հայտ կիսովի:
Նոր և լույսդ բացվել գեւ, նոր և յեռում թափը քու
և արեւ հրաջեւ նոր և սիրտդ տապալկում:

Զարթնել և յերկիրն իմ հին խոշտանդված, խոցված հնում,
ժպտում և բաց աշխարհին ու իր նոր յերգն և հինում.
առավա շեկշող լույսով իր կեսորն և դարբնում,
ու այնպես լիքն և հույսով, հույզ ու հրով անհատնում,
ու այնպես պինդ և, հզոր, վոր ձեռներն իր լուսամաս
մեկնել և հեռվին անգոր, յեղբայրներին հուսահատ...
Զարթնել և յերկիրն իմ հին, խմում և լույսը բոսոր,
բռնել և պայծառ ուղին գետի կապտաշունչ կեսոր:

Յերկիր իմ, լույսով հեղեղուն,
յերկիր իմ, բերկրուն ու բեղուն,
առ ճիչս, խնդությունս ամեն,
առ սիրտս դարթնումիդ ժամին.
առ սիրտս՝ բողբոջ մի թերի՝
թող խմե շողքը լույսերիդ.
ու յերբ գա կեսորդ հասուն՝
կճաքի սիրտս պարտասուն,
կրացվի, թերթ առ թերթ փովի,
ու նորից, քեզ յհա կտրվեն
շողերդ, ցողերդ բոլոր,
վոր քեզնից ծծեց նա մի որ:

УЛУЗУР

1923—1925

ԱԼԱԳՅԱԶԸ

Աղագյազը ասգերու մեջ՝
աղամանդե քազը գլխին:
Ա.Վ. ԻՍՍՀԱԿՅԱՆ

1. ԱՎ. ԻՍՍՀԱԿՅԱՆԻՆ

Հէյ, Ավո,
Աղագյազը թողիւ
մեն մենակ քո յերգերում.
հիմա կարոտանքով, ցավով
ու հուշերով մոխիր
սուր ես դու ղեգերում:
Ափսոսանքով-ցավով
կարոտում ես յիթե
Շիրակ-Աղագյազին,
հեռվից
լսիր, Ավո,
յերգն ես նոր պոետի
Աղագյազիդ մասին:

2. ԱԼԱԳՅԱԶԸ

Աղագյազը՝
մի ծերուկ գոռոց,

մի ծերուկ զառամ,
ցցել էր քիթն իր
դեպի անհայտն անորոշ,
դեպի վեր, դեպի ամպեր.
ու վորպես բարձրագոյն արքա,
այդ ծերուկը զառամ
նայում էր վար սակաւ:

Բյուր թելերով զառւմառ
ավեր հյուսել էր
նրա ճերմակ գլխին
թագ-վարսակալ:
Յեւ, վորպես «սրհնություն վերին»,
վերից
կախված էր անթել, անպարան
ցնորքի անգո մի կանթեղ
անարատ գլխի վրա:
Կանթեղն այդ արտասրածեթ
վառվում էր ամեն պահ,—
գիշերը,
ցերեկը՝ պարզ ու ամպած,—
բայց մի անգամ գեթ
նրան չտեսավ լոշվոք:
Մեղպես էր.
կանթեղն այդ անտես էր
ու կերտված... աստվածային վոճով:

Ալագյաղը ծանր նստած
նայում էր դեմը՝
կանգնած անհաս Մասսին.
Ժպտում էր ինքնավստահ

ու մակարդում սրտում
տենչը՝
բարձունքների մասին:

Ալագյաղը բարձրագոյն
ազան ծծում էր վերից՝
ամպերից
բոլոր նյութերը թոն,
վոլորուն աղիքներում
զալարում խանդով,
խակ հետո՝
մարսելու անգոր՝
փսխում էր դաշտերի վրա
ճահիճներ դեղին ու տոթ:

Արքա Արագած,
վարը մերկություն՝
սիրտ հոշոտող,
խակ ինքը՝ հագած,
ինքը փաթաթված
զառ ու զմրուխտ շորով:

Այգպես էր
Ալագյաղը հաստիրան,
այդ տիրանը վես
այգպես էր:

3. ԴԱՇՏԸ

Վոսնների տակ
դաշտն էր ժանգ ու դեղին,
շոք ու խորշակ,

յերաշտ ու տենդ,
ճահիճներ ու տոթ.
դաշտի կուրծքը տափակ, անջրգի
լիզում եր, կիզում
մի արև խանդոտ:

Վտաների տակ
կյանքն եր՝ անհուր ու լեզի,
քաղաքներ՝ լքուն, խորտակ
ու գյուղեր՝ կպած հողին:
Ալագյազի գլխին
չեն գոռացել
այնքան որերն ամպոտ,
վորքան դաշտումն է վոռնացել
հրանոթը մահաբոթ:
Ալագյազի թագին
չեն իջել
այնքան մարգարիտներ կարկուտ,
վորքան կարկուտն արճիճե
իջել է դաշտի կրծքին,
մահի պես անդուծ:

Քանի, քանի քանի անգամ
կքած շեներով անցան
արյան ծարավին գերի,
վորպես ուրազան, մահացան
բանակներ հրի, սրի...
Սարսափը գամեց հողին
գյուղերի ճիշը վերջին,
մարդիկ
կյանքը

կրակին թողին,
կրակը
թողեց մոխիր.
ու հողմերը թափընթաց
այդ մոխիրը անկրակ
փոեցին մահով հարբած
ու արնաթաց դաշտերի վրա:

Ահարեկ ու արնաշուրթ
քաղաքներ ընկան,
մահվան ուրուրը անկուշտ
փոեց թևերը իր սև
կյանքի վրա արնաքամ:

Ալագյազը մնաց կանգուն...
նրա վտաններին հենած,
սարսափից անքուն
մնաց Գյումրին մենակ,
մնաց Գյումրին նկուն:

4. ԳՅՈՒՄՐԻՆ

Գյումրին
ծարավ եր, տաղ,
ատամնաթափ պառավ եր
Գյումրին:
Աչքերը լուսից դուրկ,
Աքաղածի պատի տակ հստած
կհորանջեր,
կսպասեր իզուր,
վեր կանթեղը լուսավորչի
գլխար,
լույս տար ճպրտոտ աչքերին:

Գյուժըին իջած ծունկի,
աչք հառած
Արագածի բարձունքին՝
արցունք եր թափում.
հեծեծում եր,
հեկեկում եր Գյուժըին.
հեզ Գյուժըին կրկնում եր
սին մի ազոթը.
բայց քանի Գյուժըին ազոթում եր,
լուսավորչի կանթեղը ազոտ
այնքան ազոտում եր:
Ի՞նչ լույս պիտի տար
լուսավորչի կանթեղը,
յերբ նրա յեղը
իր արցունքն եր աղի:

Լուսավորիչն իր լույսը
վաղուց տարել եր.
հիմա խաբում եր.
ու Գյուժըին խաբխափում եր:
Բայց, ո՞վ գիտե, այդ լույսը
գեթ մի անգամ վառվել եր
Արագածի վրա:
Յանցառ Գյուժըին
յերազով եր տեսել լույսը նրա
ու ցերեկը խաբխափել
մութի մեջ անկամ:

Քանի, քանի անգամ
մութի միջով դողալեն
նրա վտար կոխել են

հարավից յեկող ֆեսեք.
ունե ե յեղել մեղքը,
յերբ մութի մեջ շշկված,
իրար մի լավ չեն տեսել...

Ու այդպես
մահի մութ դաշտում
մեն մենակ Գյուժըին
սարսափում, սրբափում,
սարսում, մրսում եր.
մրսելով աղերսում եր,
բայց գեթ մեկը
նրա աղերսը լսում եր:

5. ԱՆԹԵՂԱԾ ՇՈՒՐ

Թող հազար անգոր պառավ
լույս աղերսեյին
անգո կանթեղից,
աղերսը աղերս եր զուր.
կյանքն ելի վիրավոր-ծարավ,
շարավ-թարախով հղի,
կյանքն ելի անհուր,
կյանքն ելի լեղի:

Ու հունձն հասել եր ավարտի.
մահի գերանդին
մորթելուց արդեն բութ եր,
հետանվում,
սրվում եր նոր քաղերի համար:
Ո՛, նա վորքան անգութ եր,
սրվում եր ելի,

յերբ կյանքը ամա՛ գերեզմանոց եր
մութ ու անուխի...

Ուր վոր կախված են
սե մահն ու փաղվուն սուրը,
այնտեղ աղերսը դուր ե,
մահվան ուրուրը
վնչ մեկ աղթքի կանսա,
թեկուզ վողջ կյանքը դառնա
դառնահամ արցունքի կաթսա:

Աղերսը դուր ե, անաեղի,
փրկության
ուրիշ ուղի,
ուրիշ դուռ կա...
Ո՛հ, հուր կա,
ամենուր կա հուր,
գերեզմանոցում անդամ,
զազաղում՝
բարախուն սրտեր կլինեն
կենդանի թաղված:
Ամեն ուր կա հուր,
հաճախ փռչիների խորը անթեղված:

Ու ով վոր ընկնում ե արդեն
մահվան դուռը,
մոռանում ամեն ճամբեք,—
ամեն հույս դուր ե,
ամեն ինչ անպետք,
յեթե չի զարթնում
իւ սրտի թաքուն հուրը:

Դաշաւը, վոր իր կյանքը կնքել եր,
կըքել մահվան սարսափի տակ
ու դառել անկյանք փռի,
փռում անթեղել եր
մի պայծառ կրակ
ու մոռացել,
վոր այդ հուրը թաքուն
իր բախտը պիտ վորոշի:

6. ԲՈՆԿՈՒՄ

Թաքուն հուրերը հաժայն
անտես մի կապ ունեն,
մի ընդհանուր լեզու,
միթե
չգիտե Փուզի-Յաման
թե՛
յերբ ե ժայթքում Վեզուֆ.
— գիտե:
Յեթե
Մասիսը նույնիսկ իր չիբուխը վառե,
հեռու Հիմալան
իր հուրերի խինդից թեխազ կպարե:

Սե ու ծանր խավարում,—
ուր հսկում ե մահը Յերբեր,
վորպես պահակ անողոր,
բավական ե մի լարում,
բավական ե մի բողոք,
թե՛ բորբոքում մի խիզախ.
մութի գարշ հորանջի դեմ
լուսե, շողշող մի նիզակ,

լուսթյան մեջ ահափոր
բավական ե գեթ մի ճիշ,
և ահա
հրե բյուր բյուր լեզուներ
կթնդացնեն ամենուր
իրենց համերգը կիզիշ,
ագահորեն կլափեն
մութի շերտերը մեկ-մեկ,
նույն իսկ մահը ահարկու
կընկնի անգոր, ահաբեկ:
Բավ ե սերմի մի սերտ հունա,
վոր զարշ գիշերն հղանա
լուսադայժառ խորհուրդներ,
ու արհավիրքն արյունոտ:
Խաղաղությունը կապույտ:
Ալազյազի վտաի տակ
նույնն եր կյանքը՝ անկրակ,
հուրերը փոր անթեզված,
նույն մահացումը լեզի...

Հեռուներից հրավառ
կարմիր հողմեր կստաղի
հորձանեցին գեպ հարավ
ու զորշ փոշին գաշտերի
վեր-խառնեցին ամպերին
ու բացեցին
կրակները անթեզված,
ու հուրերը բոցվեցին
ու բացվեցին ահարկու
յերախները նրանց շեկ,
և գիշերվա սրտի մեջ սլաքվեցին
մահարկու բյուր-բյուր հրե լեզուներ...

Ժանտ գիշերը ել հունեցավ դարանում,
ել ամենուր, ամենուր
խարանումներ անվարան,
ճարճառյուծներ ու ճռինշ,
խարխափումներ, անկումներ,
խորտակումներ ու... թռիչք:
Կյանքը արգեն արնահագ
ավերներից անողոր
նեանց կառարն յերկնքի
արդյունքը ծանր յերկունքի,
արե մի թեժ ու բորբոք:

7. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Հորիզոնի վրա
նոր արևը վառվեց փողփողումով վորոշ,
յերկրի արնամշուշ ու թոն ֆոնի վրա
փռեց խաղաղության դրոշ:
Կյանքից ել ցանկալի
յերգն եր խաղաղության,
վոր ծորանքով իջավ
յերկրի խորշերն ի վար:
Մահացողը անհույս, կյանքից մեկնած պահին,
կուգեր մեռնել խաղաղ,
ամեն ինչին անփուլթ.
մահից փախչող արին,
կյանքին կառչել ձգտող՝
կուգեր ալը բացվի
խաղաղությամբ կապույտ:

Յերբ արևը ծաղկեց,
հորիզոնի գոգում դաշտը մորմոքում եր,

հովիտները անքում,
հեծում ձորերը մերձակա.
Իսկ Սեանը,
վորպես մի վիթխարի ձագար՝
դրված բերնի վրա
մահվան զերի յերկրի՝
հավաքում եր մրմուռ գալարքները նրա,
հոնդյուններ խապտա
ու առաքում հեռու...

Բայց արևը ծորաց
ամեն խորշ ու խոռոչ,
ամեն գյուղ ու հյուղակ,
ամեն ավերի մեջ.
Լույսը մոխրին խառնեց,
ու լույսի մեջ կորան
գոլորշիներն արևե
ու ճենճերը մսի:
Տնքոցները լքուն
դարձան որհներդ—ուռա
ու յերգեցին լույսին:

8. ԼՈՒՅՍԸ

Լույսը,
քաղցր կաթի նման,
թրջեց քանի արնոտ շուրթեր,
վոր ծարավի խաղաղության՝
աղերս եյին վորոճում զեռ:
Լույսը,
վորպես ճերմակ շոյանք,
ինչքան վերքեր թարախակալ

բալասանեց հեշտանքներով,
բուրումներով դրախդական:

Լույսը

քանի կույր աչքերում,
ուղեղներում ստոն ու գոց
ցոլեց ուժն իր
ստեղծագործ:

Լույսը

քանի հանգույց լուծեց
մշուշների ծալքում թաղված.
բացեց ուղին հեշտին ու կարճ,
տանող վաղվան:

Լույսը

վորքան հունտեր համառ
թորեց հողում, ուղեղներում,
վոր պիտ ծլեն
վաղվա համար:

9. ԶԱՐԹՈՆՔ

Խաղաղության թևը թեթև
յերբ քշել եր մշուշն արյան,
մոխրներին հերոզնեաե
կյանքը հարյավ:
Մըջնանոցի որինակով,
վոր կատաղի անձրեվից վերջ
արևի տակ կյանք է առնում
բնազդների ուժը լարած,—
խայթված հույսի նոր կրակով
քաղաք ու շեն, ավան ու գեղջ
աչք բաց արին
ավերի մեջ համառարած:

Յերբ ճմլեցին զգոն նորից
 իրենց աչքերն արյունամած
 ու վար ընկան թարթիչներից
 արյան շիթեր՝ լուսով բամբակած, —
 յերազները արյան, մաղձի
 հալածական ու աններում,
 մշուշի պես անկերարարան,
 հոնքերն ի վեր սողոսկեցին,
 անդարձ կորան
 մառ ու միջին անտառներում:

Ինչպես խելառ, ինչպես մուկ
 անուղղելի հարբողին
 սուր խայթում ե բույրը թթու,
 դայթակեցնում ե սղին, —
 զրդիոն ընկավ գաշա ու հովիտ,
 կապ կարեցին կատաղի
 շեն ու գյուղեր, յերբ թովիչ
 բույրն զգացին մայր հողի:

Ուժը կարող ու կերտող
 կարոտանքով անողոր
 ավերներից դուրս յեկավ,
 իջավ հանդերն լուսողող,
 վորպես դարնան գոռ սելավ:
 Ու անձանոթ խոնջեքին
 բազուկները մկանուտ
 չկանթվեցին ել մեջքի
 հուսակառուր, անոգուտ.
 տարիների զաղտրից
 յեռանդն յեկավ որ որի

ու բազուկները նորից
 դառն մածը արորի:
 Յեվ արգավանդ հանդերի
 արգանդն զգաց
 արտառոց կիրքն սունական արորի,
 գալարքները դերդգա
 ու թորումը
 անսպառ, արևասերմ հունտերի:

Քաղաքները գորշաշեն՝
 փողոցներով ծուռ ու նեղ,
 հայացքների նման շիլ,
 յերբ նայվածքներն ուղղեցին
 ու նայեցին հեռուներ,
 ոհմ, սւր եր մնացել
 կյանքն այն արնով ապական,
 ու զգացին, վոր արդեն
 բռնած սղիղ, նոր ուղի,
 գնում են գեպ տաղադան:

10. ՈՐՆԻՆ

Վորպես այն որն,
 վերջին որն այն որհասական,
 յերբ անամեռ յերկրիս վրա
 վորոտում եր անեղագոռ
 մի բաց բերան.
 Վորպես այն որն, յերբ գորշ մի փող
 կարկտում եր յերկրիս վրա
 ծիլ ու ծաղիկ խանձող կրակ,
 վորպես որն այն,
 դաժան եջը մեր սլառամության:

Գոցվեց վորով, —
 վորպես այն որն,
 զգրգում է մեր սարերում
 մի նմր վորտա:
 Գոռգոռում են հրաբարբառ
 պոյթող ումբեր,
 զգրգում են սարսուռ առած
 լեռները մեր,
 ճաք-ճքվում են ճարճատելով,
 տրաքվում են պատմո-պատառ
 ժայռերը լերի...
 Պատտովում է,
 ճեղքվում է հոգն լեռնակողի,
 վորի աակից սողոսկում է զաղապաղի
 հրաշածին ու կենսաբաշխ
 առատ մի ջուր, —
 մինչ արևախաշ
 պաղակվում են ու տապակվում
 մարդ, հոտ ու արտ
 արևախանձ գաշտամիջում:
Փշրվում է անեղատալիթ
 ժայռակառույց ափը գետի,
 վոր դարերով, վորպես մի բանդ,
 ողակել էր կարոտն այն թաց,
 վորին անշափ տենչում էր մի
 այրված գետին:

Վորպես այն որն,
 վերջին որը մեր մորմոքի,
 յերբ բազմությունն,
 վորպես մի հոտ գազանհալած,

յերած վորտքի,
 խուճապում էր այրված գյուղից, —
 հիմա ելած
 նա միակուռ ու միակամ
 ծայր է տվել նոր գրոհի,
 ավերներն այս հին յերկրում
 նա փռում է լուսե ուղի:
 Խաղաղության զավակն է շեն
 այս նոր գրոհը շինարար.
 վորին ձուլված՝ ստեղծում են
 քաղաքացի ու շինական,

Ել շրջվել է հունը կյանքի,
 նախկին հունը հին պատանք.
 կյանքը տվեց
 նոր ջահակիր,
 նոր ուղիներ, նոր նպատակ:

11. ԾՈՒԽ

Ել հարթվել է, փռվել է ձիգ
 մեր նոր ուղին
Դեպի գալիք:
 Հին գաշտերում՝ խանձված, դեղին,
 ջուրն է հոսում ալի, ալի.
 մահի ահը պահ է մտել.
 թին ու բահը հին են, փթած.
 հյուղն ու հողը կյանք են գտել
 ու կյանքի հետ շոգեգութան:
 Լեռնածոցում հանգած հանքեր
 ստացել են նոր յեռացում.
 կարիքների մեռնող պատկեր,

բարեքների

նոր լեռնացում:

Անմեռ քաղաքների սրտում

նոր արյունի բաբախ

ու զարկ:

հորոնջի տեղ՝ յեռք, խլրատւմ,

անիվներով նոր յերգ հուսած:

Ու ամեն մարդ

եւ մենակ չե

իր ոճախի ցավ ու դարդով:

այլ՝ բյուրերի ուժին հենած,

նոր բյուրերին

ուղի հարթող:

Եւ զգում ե՛մ մի բոլր արե

իր ուղեղի մուկն ե խարեւ:

ու տեսնում ե այնքան հեռու,

վորքան պապն իր,

դառամ-ծերուկ,

պատմում եր սոսկ

հին հեքյաթով՝

աշխարհների մասին հեռու

հրաշքներով լի, հոգեթով...

Մարդ ահամա

միտք ե անում:

«Յերեկն ուր ե,

խեղդող մի ծուխ:

Են ուր կորան

պառավ Գյումրին

ու իր արքան թագադրութի:

Ալագյազն եւ

հին ծերը չե՝

դրած թագը բառագլուխ:

Թող այն ծերը

ընդմիշտ ննջե,

Թող չհանե եւ շունչ ու ծուխ:

Թող եւ վսշ մի ցնորք-կանթեղ

չպլպլա գլխի վրա:

ու պառավներ ցնդած, խռփուկ

եւ չկախվին փեշից նրա...

Ալագյազը

մեկ չե հիմա՝

թառած գլխին

իր հին բերդի:

Հիմա քանի

գեղջուկ, բանվոր

նստել են վեր

նոր խորհրդի:

Այն գլխի տեղ,—

թագ բառածայր,—

տես, խորհուրդն ե

վերը նստել:

հին ծերերի դեմ ծառացած

այն մեր յերկրի

կամքն ե վսեմ,

վոր աշալուրջ

մեր նոր յերկրի
վերածնունդը կհսկե:

13. ՎԵՐՁԵՐԳ

Հէյ, Ավն,
թողած քո հին Ալազյազին՝
յերգս հեռու գնաց,
հեռուների մասին:
Յես չերգեցի մանթաշ,
ծաղիկները զառ վառ,
իր հավքերը զմրուխտ
ու հովերը մարմանդ:

Քեզ չտվի վռչինչ
հին բույրերից անուշ,
բույրերի հետ թույն կար,
հիմա ծուխ ե և հուշ...

Դու հեռու ես հիմա,
քիչ ել ոտարոտի...
Բայց բացեցի՞ արդյոք
դռնակը կարոտիդ.
կարոտե՞լ ես հիմա
յերգած յերգերին քո...
Չերգած յերգերդ բեր՝
նոր որերի բերքով:

Յեթե դու գաս, դիտես
մեր նոր Ալազյազին,
կասես՝
«Յերգդ, պոետ, ճիշտ ե
Ալազյազիս մասին»:

ՆՈՐԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

1925

ՆՈՐԻ ՆԱԽԵՐԳԱՆԲԸ

1. ԱՌԱՋՆՈՐԴ

Պայքար, հաղթանակ ու մահ,
եւ չկա ուղի ուրիշ.
դարը դարին հակագիր,
ու դարի իմաստը՝ դուժար
քանդակված. անխորդախ մի նիւ
պատմության բաց ճակատին:

2. «ԵԶՄԻԱԾԻՆ»

Հայրս, մի ծեր քահանա՝
իր սրերի պարծանքը,
իմաստը անցած դարի,
խոր ակնածանքով,
նախապես յերեսին խաչ հանած,
կյանքը սուրբ Հուսավորչի
պատմում եր բոլորին:
Պատմում եր, վոչ սրինակ լինի,
վոր վոչ վոք չմոլորի,
վոր վոչ վոք դուք չկորչի:

Բարձրանում եր ծուխը ծխամորձի.
հայրս ծխում եր,
ծխելով պատմում եր
վարքը սուրբ Լուսավորչի:
Ու մի մշտ լուսավորչից,
ծխամորձից
հազարի պայծառ միտքը քողում եր:

Տեսել եր սուրբը՝ Մասիսին մտաիկ,
դաշտում Արարատ.
Իջել եր լույսը,
Մասիսի ձյան պես,
հրաշք, անարատ:

Կանգնել եր լույսը, սյունի պես,
ճերմակ քան ձյունը,
ու անհաս վերից,
այդ լուսե սյունով,
ասում եր, «Ե՛ջ Միածինը»:
Միածինը ասել ե սուրբին,
իհարկե յերազում,
այնտեղ, ուր ինքն իջավ
ուր լույսն ե հոտում՝
պետքե տաճար կառուցել,
աստուծո տուն բազմաջահ,
վոր լույսը,
յերկնային լույսը՝
յերկրայինը հմայող՝
փովի, ամենուր հասնի
ու լուսավորե
հնամյա ազգը Հայոց:

Հնում ամեն ինչ
վճռում եր մի սուրբ
կամ մի արքա
մենության մեջ յերազի,
իսկ յերբ դարձներ բնից
ամեն ինչ պիտի կապեր
աշխատավորի (յեզի պես խոհարհ)
վզին:

Արքա Տրդատի հետ
Լուսավորիչը տքնել ե...
աշխատանքը սիրել,
աշխատանքը մոտիկից դիտել.
այդ դեռ քիչ ե,
ասում եր՝ «Քար ե կրել»:
Արքան ու Լուսավորիչը,
այսինքն մարմին ու հոգի,
քար կրելիս,
(պատմում եր հայրս
Արքայի քար կրելը)
ամառվա կրակ շոքին
չոր դաշտում,
ծանրաթյան ճնշմամբ
հողում խրվել են մինչև ծնկները.
Քար են կրել ու այնտեղ,
ուր իջել էր «սուրբ միածինը»,
Լուսավորիչը կառուցեց
«Ազգի պարծանք Եջմիածինը»:
Ո՛վ գիտե՝
Լուսավորիչն ու Արքան
ճանրության ներքո՝

կքե՞լ են բնավ:
Պատմում են.
բայց ո՞վ, ո՞ւմ...

?

Պատմության, յեղիւ վկա,
վոր վոչ վոք չհանգանի հերքել
թե՛ այդ յերկուսի ծանրությամբ
իմ խեղճ յերկիրը
ինչքան ե խրվել հողում:

Պատմում եր հայրս,
յես ել եմ տեսել, դուք ել,
թե տարին քանի հազար,
քանի հազար ուխտավոր
եջմիածնի դուռն են չորել:
Քանի լուսնոտ ե թովել
հողավոր լույսը գյութական,
մի քաղցը խոստումի համար,
ապառիկ յերազի գին,
վորքան բարիք նյութական:

Հորդել ե դարեր շարունակ
խեղճ ժողովրդի ինչքը
դեպի մառանը վանքի,
իսկ վանքը դրա դիմաց
կույր հոգիներին խոստացել ե լույսը,
լույսը հանդերձյալ կյանքի...

Նույնն եյին շարունակում
դեռ մինչև յերեկ ել

մի լուսավորիչ ու մի նոր Տրդատ
Իբր թե
ծանրություն եյին կրում,
բայց խժուում եյին անկուշտ
խեղճ ժողովրդի պատառը բրթած:

Դարն այդ եր,
դարի որենքն ել որենքով արդար,
մինչև դժգոհը յեկներ
ու այդ որերի դեմ
ընդվզում կարդար:
Ամեն ինչ, կարծես, բնական եր,
պատերից յեկած սրբազան ավանդ,
ո՞վ կարող եր դեմ դնալ,
կամ, թեկուզ,
չլինել հավան:
Ո՞վ եր մատծում նույն իսկ,
ո՞վ եր խորհում այդ մասին,
քանի վոր
պոեսն ել եր յերգում՝
«Քո հիմքն ամուր ու անսասան,
եջմիածին»:
Ամեն ինչ այդպես եր յեկել,
այդպես ել կերթար,
նախնամողը (գոհություն հազար)
կյանքն այդպես եր կերտած՝
«հիմքը ամուր ու անսասան»:
Այդպես եր կյանքը,
մեկը վեր՝ հազարը՝ վար,
հազարը ի՞նչ աննշան,
միևնոյնն ե թե այդ մեկը

լինէր Գրիգորը, Գեփորգը
կամ Տրդատն ու...
Ռուբեն փաշան:

Հիմա ել կա Եջմիածինը,
վոր վողբում է իր փառքը անցած.
Եջմիածին ել չկա,
կա մի քարաշեն արձան:
Ու վորպէս խտացած սիւմլու
մեր հին յերկրի անցյալի,
վորպէս սարսափից
քարացած զինվոր.
կանգնել է անշարժ ու լուռ,
փակել է աչքերը թախծալի՝
պատմության վճռին հլու:
Ել չունի մատաղ, ու խտավոր.
ժողովուրդն այլ տեղ է գնում՝
առանց սրբի նա
դարձավ բախտավոր
ու հիմա ել սրբին է հեգնում:
Կյանքը բեկել է, թեքել ուղին,
վանքը մնացել է
կանգնած վղածուռ.
Իզուր է նա սպասում
թե գեղջուկը կդառնա մեկ ել,
կբերե մատաղ, մացու:
Գեղջուկը ել չի ուզում
դրախտի լույսը ասլառիկ.
արդեն գիտե, վոր
եկեքտրո լույսը կգա,
կգա իր բակում վառվի:

Այնպէս վոր դուք է
վանքն սպասում վղածուռ
թե՛

գեղջուկը կգա ելի,
կբերե մատաղ մացու:
Կյանքը իր ուղին
բեկել է, թեքել
յերբեր հին ճամբով
չի դառնա մեկ ել:

3. «ԵՋ ՄԻՍՍԻՆ»

Գնում եմ Լենինական.
Շիրակ եմ գնում
գնացքով արագ:
Գնացքը լիք է.
Կարծեմ, բոլորն ել
գնում են Շիրակ:
Վորպէս շինարարի լուր՝
չըջող մեր որերում,
գնացքը սուրում է սուր,
գնացքը սրորում:
Գնացքը ֆշում է,
քշվում է արագ, —
նա մեզ ասում է՝
«Տանում եմ Շիրակ»:
Որորում է մեզ նա,
անըջում եմ վազոնում...
Թվում է՝ սեղ եմ նստած,
թվում է՝...ուխտ եմ գնում...
Մերոնք առջ Գնացին,

դժգոհ եմ, քնաթաթախ,
 գնում եմ... Եղածին.
 մի խոյ ենք տանում մատաղ
 յես ու իմ ընկեր Միխան:
 մի խոյ չե, յերկու խոյ են:
 յեղջուրներով կեռ ու կոր,
 վորպես խելառ ախոյան,
 կռվում են խոյերը զոտ,
 խփվում են ճակատ-ճակատի,
 բախվում են յերկու խոյը,
 յեղջուրները ճարձատում են,
 ընկնում ե մի ախոյանը...
 Գոռում եմ՝ «Միխն, Միխն,
 խոյն ընկավ ես վիհը խոր,
 յեկ հանիր, յեկ, մեղք ե, Դ...»
 — «Ինչո՞ւ ես այդպես խոռում,
 բռնում ե ինձ ընկեր Միխան,
 ի՞նչ ես խրխում, խենթ ես:
 Հասել ենք արդեն կայարան...»
 Մահացել ե հորս լեզենդը:
 Մանում եմ Լենինական:

Այսօր Շիրակում տոն ե,
 Շիրակում կարմիր խնդում,
 կարծես հարսանքատուն ե,
 ուր գունան
 ու թմբուկն են թնդում:
 Ամբողջ քաղաքներ յեկել են վտաի,
 յեկել են Շիրակին այցի.
 Ճվ ասես, վոր չի յեկել,
 նախկին նախարարից բացի:

Յեկել են ամեն կողմից՝
 գեղացի,
 բանվոր,
 կոմիսար...
 Յեկել ե մեր յերկիրը,
 յեկել ե մեր յերկրի մասսան.
 յեկել ե խոր կարոտով,
 վոչ վորպես յառ այցելու,
 յեկել ե խնդուն, հպարտ
 Շիրակի ջրանցքը բացելու:

Փռվել ե արևի տակ
 մի բազուկ հազար մկան.
 ահա այդ թևը տիտան,
 իր ուժին գիտակ,
 պիտ կերտի կապույտ ապագան...

Յերբ կրկին դու յես գտնաս,
 յես գնաս,
 քաղաքացի Նանսեն,
 կասես հեռավոր մարդկանց
 թե մեր կուռ կամքը այս եր:

Ահա ջրանցքը Շիրակի.
 ջրանցքը Լենինի անվան —
 յերկարուն տունել առ տունել...
 Ո՛ր, ինչպե՞ս բյուր կիրակի
 մատաղել սուտ սրբերին,
 իսկ այս փառքը հառնել.
 Հարուստ, Հզովերգել
 կամքը աշխատող մարդու.
 Հմուտալ հին, մամուտ վերքը:

չխնդալ այս բաց հանգուսի:
 Ո՛հ, ինչպէս հայ գեղջուկը
 չզլե զհոլ, գուռնա.
 յերեկվա որը, յերբ խեղճուկ եր,
 այսորվա որով չմոռնա:
 Ի՞նչպէս նա այս տեսնե
 ու Սապետը չգովի,
 կամ ճերմակ մի գառ չզոհն
 ջրանցքին այցի յեկած
 իր մեծ ընկեր Ռիկովին...

Խլրտուն գետակը-Գարեգետ,
 ձորում ել չի գալարվում,
 չի ճշում,
 չի արտնջում,
 հայդա՛,
 յելել ե ուղին թեքել,
 վորպես մեր կյանքը դալարուն,
 գնում ե դաշտերում խայտա՛:
 Թողել ե իր հին հունը՝
 պառաված ժայռ ու կնճիռ,
 ծառացել վիթխարի թափով,
 շրջել ե ջուրը վճիտ,
 Գնում ե նոր բացված ճամբով...
 գնում ե:
 կապույտ ժապավեն,
 հանդ ե հանդ,
 արա ե արա սողոսկի.
 (ոձի պես գուր սողալ բա՛վ ե)
 գնում ե ճյուղ ե ճյուղ հյուսվի
 ճառիկերի վարսերին վոսկի:

Հանդերի կարոտը չոր
 ու ջրի հմայքը թաց,
 վորպես բանվոր ու գեղջուկ,
 իրար դաշինքի յեկած,
 գրկվում են, համբուրվում այսոր,
 արև ու կանաչով հարբած:

Գնում ե ջուրը,
 շրջում ե ալի, ալի.
 գնում ե ջուրը թավալուն.
 գնում ե բանի:
 Գործի յե գնելու ջուրը
 քանի՛ վիթխարի անիվ:
 Գնում ե գյուղերին տալու
 ինչէր.
 ջուրը չի խաբում,
 Եջմիածին չե,
 վոր ամեն ինչ ստանա,
 իսկ խոստումը
 խոստում մնա ելի.
 ջուրը տալու յե
 արտերի դեղին բերքից
 մինչև հաճելի լույսը
 ելեքորական թելի
 ու ելի, ելի, ելի...
 Գեղջուկը, բանվորը,
 վոր խլուրդի պես
 հողի արգանդն եյին փորում.
 գիտեյին թե ջուրը
 այդ նորաշեն ճամբով
 ինչէր ե բերում...

Այս եջմիածին չե.
 Եջմիածինը ուրիշին եր,
 այս մերն ե,
 այս մենք ենք շինել.
 շինել ե մեր կամքը համառ,
 շինել ե մեր կարիքը
 մեր բարիքի համար:
 Այս եջմիածին չե՝
 հոգու փրկության բաղար,
 այս «Եջմիածին» ե,
 շինել ե մասսան:

Այստեղ չկա մի,
 այդ մենք ենք շինել
 հին հակադիր,
 վոր մեր որերի
 իմաստն ել գամենք
 պատմության բաց ճակատին:

4. ԱՊԱԹԵՈՋ

I

Յերեկո. վերջալույս.
 դեղնություն դալուկ:
 եջմիածին.
 գորշ շենքեր յեկեղեցու,
 խաչերի ծախր հայացք
 դեպի կապույտը կեցող:
 Պատի տակ՝
 իր ցուպին հենած
 մի ծեր վանական,

մենակ, մենակ
 ու անոգնական:
 Զանգերի զոլանջը
 վերջին.
 վերջին
 ակկորդը մեռելածայն:
 Լուսթյուն, լուսթյուն ճնշիչ.
 մի գորշ, վիթխարի արձան:

II

Լուսայգ. առավոտ.
 զարթնում փառավոր:
 Զրանցք.
 ջրերի ժպիտն ու կարկաչող շղթան
 հանդերի սրտին հասած.
 ջրանցքի ափով թնդան
 մարդկային մասսան:
 Դրոշներ կարմիր,
 փող-փող,
 բորբ լենտեր պյունեական:
 Հեռվում քաղաքը քնաթող՝
 նոր Լենինական:
 Կապույտի միջից
 նոր ծխնելույզներ՝
 նշմարվող մեկ-մեկ:
 Շչակի սույլը առաջին՝
 «Շահա գործի. յեկեք»:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

ԵԶ	ՏՈՂ	ՏՊՎԱԾ Ե	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
14	3-րդ վերևից	միստիկ	միստիք
21	վերնագիրը	կացծոռիկներ	կայծոռիկներ
21	12-րդ վերևից	Խուղճապող	Խուճապող
22	»	Լույսերը,	Լույսերը
37	7-րդ վերևից	Համայքներ	Հմայքներ
41	2-րդ »	Դրել Ե	Դրել Ե
42	1-ին »	Հուր հրի	Վառ հրի
47	3-րդ ներքևից	Բազկիդ	Բազկիդ,
51	1-ին »	առփյունը	Դռփյունը
52	2-րդ վերևից	Լապտերդ	Լապտերը
52	6-րդ »	Տոփում են,	Դռփում են,
71	14-րդ »	Պազմից	Ռազմից
74	6-րդ »	Կհոչակեն	Կհոչակեն
75	5-րդ »	Գյութել	Դյութել
85	4-րդ »	Հրվանդ	Հիվանդ
89	2-րդ »	Դցի	Դցի
89	4-րդ »	Պեռ	Պեռ
97	10-րդ »	Մթնուլորդն	Մթնուլորտն
99	14-րդ ներքևից	Կերկեր	Կերկեր
100	2-րդ վերևից	Միթինդ	Միտինդ
106	6-րդ ներքևից	Բանդում	Բանտում
126	14-րդ վերևից	Դայթակղեցնում	Դայթակղեցնում
128	8-րդ ներքևից	Բանդ	Բանտ
135	3-րդ »	Վոչ որինակ	Վոր որինակ
137	7-րդ վերևից	Խոնհարհ	Խոնարհ

Յ Ա Ն Կ

I ՃԵՐՄԱԿ ՏԵՍԻԼՆԵՐ 62

1. Պոեզ	7
2. Խաղափում	8
3. Վորք	9
4. Լուսնի մահը	10
5. Պառավը	11
6. Դեպի տուն	12
7. Մայրս	13
8. Հայրս	14
9. Քույրս	15
10. Յեղբայրս	16
11. Վերջ	17
12. Սրեզի ակ	18

II ԿԱՅԾՈՌԻԿՆԵՐ 21

III «ԻՆԲՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ» 27

IV ՈՐԵՐԻ ՍԵՐԸ

1. Սեր	33
2. Յես	34
3. Կիցը	35
4. Լույսը	36
5. Վայելք	37
6. Այստեղ	38
7. Ռանգը	39
8. Յերգը	40
9. Զոհը	41

10. Վահան	42
11. Բանալի	43
12. Փռի	44
13. Խուսափում	45
14. Սրբալ	46
15. Հորդոր	47
16. «Հետև»	48

V ԱՅԳԻՆ 51

VI ՈՐԵՐԻ ՃԱՄԲԻՆ 57

VII ՀՈՒՅԶԵՐԻ ՀԵՅԶԵՐ 69

VIII ԱՌԱՋԻՆ ՈՐԸ 97

IX ԼՈՒՍԱՅԳ 105

X ԱԼԱԳՅԱԶ 113

XI ՆՈՐԻ ՆԱԽԵՐԳԱՆԲԸ 135



46604

ጥቅምት ፩ ፳፻፲፭